

ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Մենք երբեք չենք ներելու
թուրքերին

We will never forgive the Turks

ما تُرک ها را هرگز نخواهیم بخشید



۲۴ آوریل ۱۹۱۵

سالروز نژادکشی ارمنیان در ترکیه

Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Խմբագրական.....0
- 2- Հայաստանի Հանրապետություն.....1
- 3- Արևմտյան Հայաստան.....10
- 4- Սփյուռք.....10
- 5- Միջազգային.....14
- 6- Մշակույթ.....18

Պարսկերեն բաժին

- Արցախի պատմություն.....0-3
- Ռաֆաել Նահապետյան.....4-7

Շապիկի առաջին էջում` «Չենք ներելու Թուրքերին»

Վերջին էջում` Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 222, Ապրիլ 2017 No. 222, April 2017

ماهنامه لويس - شماره ۲۲۲ اردیبهشت ماه ۱۳۹۶

Մշակութային եւ հասարակական ամսագիր

ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր`
Էդ. Բաղդասարյան
Խմբագրական կազմ`

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան

Թամ Ղարախանյան, Վաչիկ Վարդանյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդույան,

Մաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչույան

Փոստարկղ **15875-9488 Թեհրան - Իրան**

Էլեկտրոնային փոստ` louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն` www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին: Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

ماهنامه لويس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com

نشانی اینترنت: www.louysonline.com

Լրանում է Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցը



Ապրիլի 24-ին ամբողջ աշխարհի հայերը եւ համաշխարհային հանրության առաջադեմ հատվածը հիշում են 20-րդ դարի առաջին Յեղասպանության զոհերին: Ապրիլի 24-ի օրը պատահաբար չի ընտրվել: Հայոց ցեղասպանությունը մի քանի փուլով է իրականացվել: Բայց հատկապես 1915 թվականի ապրիլի 24-ին եւն Կոստնադնուպոլսում ձերբակալվել հայ մտավորականության ներկայացուցիչները, որոնք հետո մահապատժի են ենթարկվել:

1892-ից 1923 թվականները Համիդյան Թուրքիան, այնուհետեւ երիթթուրքերի կառավարությունը` Թալեթի, Էնվերի եւ Ջեմալի գլխավորությամբ, Արեւմտյան Հայաստանի, Կիլիկիայի եւ Օսմանյան Թուրքիայի նահանգների հայությանը զանգվածային արտաքսման եւ ոչնչացման են ենթարկել:

Գրեթե 1,5 մլն մարդ է բնաջնջվել 1915-ից 1923 թվականների ժամանակահատվածում: Մնացած կես միլիոնից փոքր-ինչ ավելի հայրեր տարածվել են ամբողջ աշխարհում: Յեղասպանության հետեւանքով Արեւմտյան Հայաստանը զրկվել է իր բնիկ բնակիչներից, իսկ հայրերը` իրենց պատմական հայրենիքից: Ոչնչացվել են հազարավոր հայկական ձեռագրեր, կործանվել են հարյուրավոր պատմական եւ ճարտարապետական հուշարձաններ, պղծվել են ժողովրդի սրբավայրերը: Հրկիզվել եւ կողոպտվել են ավելի քան 60 հայկական քաղաքներ եւ 2,5 հազար գյուղեր:

Հայ ժողովրդի Յեղասպանության փաստը շատ երկրներ են ճանաչել: 1965 թվականին դա առաջինը արել է Ուրուգվայը, որի օրինակին են հետագայում հետեւել Ռուսաստանը, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Հոլանդիան, Բելգիան, Լեհաստանը, Լիտվան, Մյովակիան, Եվեդիան, Եվեյցարիան, Հունաստանը, Կիպրոսը, Լիբանանը, Կանադան, Վենեսուելան, Արգենտինան, նաեւ ԱՄՆ-ի 45 նահանգներ: Հայոց ցեղասպանությունը ճանաչել են նաեւ Վատիկանը, Եվրախորհրդարանը, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը:

Հայաստանի Հանրապետություն

Չեխիոյ Խորհրդարանը Ճանչցաւ Հայոց Տեղասպանութիւնը



ԵՐԵՒԱՆ.- Հայաստանի Հանրային ձայնասփիւռի կայանը կը տեղեկացնէ, թէ Չեխիոյ խորհրդարանը Երեքշաբթի, Ապրիլ 25ին վաւերացուցած է Հայոց Տեղասպանութիւնը ճանչցող բանաձեւ մը, որ առաջադրուած էր երեսփոխան Ռոպին Պէօնիչի կողմէ:

«Չեխիոյ պարտքն էր ճանչնալ Հայոց Տեղասպանութիւնը: Քանի որ երէկ Հայոց Տեղասպանութեան 102րդ տարելիցն էր, այս բանաձեւը վաւերացնելը նաեւ խորհրդանշական իմաստ ունի», յայտարարած է Պէօնիչ:

Նշենք, որ Չեխիոյ նախագահ Միլոս Չեման եւս ճանչցաւ Հայոց Տեղասպանութիւնը եւ Ապրիլ 24ին, հայ համայնքին ուղղուած ցաւակցական ու զօրակցական նամակ մը յղեց՝ Հայոց Տեղասպանութիւնը համայն աշխարհի պատմութեան մէջ ողբերգական էջ մը նկատելով:

Չեխիոյ խորհրդարանի Արտաքին յարաբերութեանց յանձնախումբը Ապրիլ 14ին միաձայնութեամբ վաւերացուցած էր վերոյիշեալ բանաձեւը, որուն մէջ նաեւ կը դատապարտուի Տեղասպանութիւնը ուրանալու ջանքերը:

Ապրիլի 24-ին ողջ աշխարհն է հիշում հայերին. Կանադացի քաղաքական գործիչ



Ապրիլի 24-ին ողջ աշխարհն է հիշում հայ տղամարդկանց, կանանց ու երեխաներին, որոնք 102 տարի առաջ սոսկալի տառապանքներ են կրել եւ կյանքեր կորցրել: Այս մասին ասված է Կանադայի պահպանողական կուսակցության առաջնորդ Ռոնա Ամբրոզիոյի հայտարարությունում:

Նրա խոսքով, ամեն տարի Կանադան եւ շատ այլ երկրներ քննարկում են այդ տարելիցը՝ գոյություն ունեցող հակամարտությունների վրա լույս սփռելու եւ ցույց տալու, որ դրանք չհանգեցնեն նման ողբերգական իրադարձությունների:

Կանադան կա եւ պետք է շարունակի մնալ մարդու իրավունքների եւ ժողովրդավարական ազատությունների հպարտ պաշտպանն ամենուրեք, որտեղ այդ արժեքները

վտանգի տակ են: Ահա թե ինչու մենք ուրախ ենք տեսնել, որ Կանադայի հայերը եւ թուրքերը կարող են միասին աշխատել արդյունավետ հարաբերություններ հաստատելու հարցում: Այս տարելիցին ես եւ պահպանողականների ողջ խորհրդարանական խումբը միանում է բոլոր պահպանողականները հիշում ենք զոհերին բոլոր կանադացիների հետ միասին, եւ կոչ անում երկու համայնքների ներկայացուցիչներին շարունակել հաշտությանն ուղղված ջանքերը», - հայտարարել է կանադացի գործիչը:

Կիպրոսի խորհրդարանը միջազգային հանրությանը կոչ է անում ճանաչել Հայոց ցեղասպանությունը



Կիպրոսի խորհրդարանը դատապարտել է Հայոց ցեղասպանությունը՝ միջազգային հանրությանը կոչ անելով հանցագործությունը ճանաչել:

Խորհրդարանի նիստի իր ելույթում խոսնակ Դեմետրիս Միլուրիսը նշել է, որ Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունից հետո ավելի քան 100 տարի է անցել, սակայն Թուրքիան մինչեւ հիմա հրաժարվում է ճանաչել 1,5 միլիոն հայերի սպանությունը, հայտնում է Famagusta Gazette-ն:

Միլուրիսը միջազգային հանրությանը կոչ է արել Հայոց ցեղասպանությունը ճանաչել եւ դատապարտել:

Խորհրդարանում հայ համայնքի ներկայացուցիչ, պատգամավոր Վարտկես Մահդեպյանն իր հերթին հայտարարել է, որ Հայոց ցեղասպանության մեղավորները անպատիժ են մնում:

Նա նշել է, որ ավելի քան 100 տարվա ընթացքում հայերը պահանջում են պատմական անհերքելի փաստերի իրականացում ճանաչում:

Կոնգրեսական Դեյվ Թրոթ. Ժամանակն է, որ ԱՄՆ-ը Հայոց ցեղասպանությունը ճանաչի



Շատ երկրներ, այդ թվում՝ Միացյալ Նահանգները, հրաժարվել են ճանաչել հայ ժողովրդի դեմ իրականացված Տեղասպանությունը: Կոնգրեսական Դեյվ Թրոթն այս մասին նշել է Armenian Weekly կայքում հրապարակված իր հոդվածում:

Հողվածում Թրոթը նշել է, որ ինքը ներկայացնում է «ուժեղ եւ աչքի ընկնող» հայ համայնքի շահերը: «Կոնգրեսում ընտրվելու իմ առաջին ժամկետի ժամանակ եւ Հայաստան ուղևորվելու հնարավորություն ստացա՝ նշելու Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը: Հարյուրամյակը նշելու արարողությունը հանդիսավոր հիշոցում էր 1,5 միլիոն հայերի հոգեցունց սպանության մասին, որը սկսվել է 1915 թվականին, երբ Օսմանյան Թուրքիայի իշխանությունները հայ ժողովրդի դեմ թիրախավորված հարձակում են սկսել նրան բնաջնջելու փորձ կատարելով»,- հայտարարել է Թրոթը:

Նրա խոսքով համակարգված արշավի ընթացքում Օսմանյան կայսրությունը մտադիր էր ոչ միայն հայերին բնաջնջել, այլև բռնագրավել եւ ոչնչացնել նրանց եկեղեցիները եւ հուշարձանները՝ ամբողջովին ոչնչացնելով հայ ժողովրդի եւ նրա մշակույթի հիշատակը:

Կոնգրեսականը նշել է, թե ժամանակն է, որ Միացյալ Նահանգները ճանաչի պատմության այդ սեւ ժամանակաշրջանը: «Այս ամիս ես բանաձեւ եմ ներկայացրել, որում վերջապես ճանաչվում են այդ վայրագությունները եւ Միացյալ Նահանգների կառավարությանը կոչ է պարունակվում որպես հայ ժողովրդին համերաշխություն պաշտոնապես ճանաչել Յեղասպանությունը, որը տեղի է ունեցել ավելի քան 100 տարի առաջ»,- հայտարարել է նա:

Թրոթն իր հողվածում նաեւ նշել է, որ Հայաստանը մեծ թվով աշխարհաքաղաքական խնդիրների է բախվում եւ Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից տնտեսական շրջափակման մեջ է: Նա ընդգծել է, որ իր գործընկերներ Էդ Ռոյսի եւ Էլիոթ Էնգելի հետ կոչ են արել մի շարք առաջարկներ իրականացնել, որոնք թույլ կտային տարածաշրջանում ագրեսիան նվազեցնել:

«Ըստ այն հանգամանքի, թե ինչպես է կազմավորվել Թրամփի վարչակազմը՝ ինձ հաճելի էր լսել, որ պետքարտուղար Թիլերսոնը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ճանաչում է որպես «տարածաշրջանի կայունությանը եւ ԱՄՆ-ի ազգային անվտանգության շահերին սպառնալիք», եւ ես կաշակցեմ այս հակամարտության մեջ մեծ դերակատարում ունենալու վարչակազմի ցանկացած փորձ»,- նշել է նա՝ հույս հայտնելով, որ Ադրբեջանը իր ագրեսիայի համար պատասխանատվության կենթարկվի:

«Մոտենալով Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին՝ վաղուց ժամանակն է ճանաչել, որ մենք ոչ միայն չենք ընդունում անցյալում հայերի դեմ ուղղված բռնությունը, այլև հաստատում ենք հայ ժողովրդի հետ մեր համերաշխությունը, քանի որ նրանք շարունակում են իրենց եւ իրենց վառ մշակույթը պաշտպանել դեռեւս ավելի անկայուն տարածաշրջանում»,- ամփոփել է նա:

Արցախ այցելած բելգիացի պատգամավորները բաց նամակ են հղել Ադրբեջանի դեսպանին

Արցախ այցելած բելգիացի մի խումբ պատգամավորներ «Բելգիացի պատգամավորներն Ադրբեջանի «սեւ ցուցակի» վերաբերյալ» խորագիրը կողո բաց նամակ են հղել Բելգիայում Ադրբեջանի դեսպանին:

Բելգիական «[La Libre](#)» թերթի փոխանցմամբ՝ նամակը ստորագրել են Անդրե դե Բյուսը, Ժան-Կլոդ Դեֆոսեն, Ջուլի դե Գրոտը, Միսոն Չյուսկինդը, Ֆատումատա Միդիբեն,

Էրվե Դոյենը, Փոլ Դելվան, Բենուա Դրեզը, Էմանուել դե Բոկը եւ Պյեռ Կոմպանին, հաղորդում է «Արցախայրես»-ը: Նամակում պատգամավորները մասնավորապես իրենց մտահոգությունն են հայտնում առ այն, որ Արցախ այցելելու համար հայտնվել են Ադրբեջանի «սեւ ցուցակում»:



«Ինչու՞մն է մեր մեղքը՝ որպես Բելգիայի, Բրյուսելի, Ֆլանդրիայի եւ Վալոնիայի պատգամավորներ, որ Լեռնային Ղարաբաղում (Արցախ)՝ մայրաքաղաք Ստեփանակերտում, ձեռք ենք սեղմել մայրերի եւ հայրերի հետ: Այս ինքնահոշակ հանրապետությունը 26 տարի առաջ անկախություն է հայտարարել ձեր երկրից՝ Ադրբեջանից»,- նշում են պատգամավորները:

Նամակի հեղինակները հայտնում են, որ բազմաթիվ անգամ այցելելով Արցախ, իրենք մտադրություն չունեին հակամարտության լուծումներ առաջարկելու: Նրանք նշել են, որ Բելգիայում մոտ երկու դար առաջ լուծում են գտել միջազգային իրավունքի երկու սկզբունքների՝ ազգերի ինքնորոշման եւ տարածքային ամբողջականության միջև, եւ որ ցանկացած հակամարտություն ունի իր յուրահատկություններն, ինչը պահանջում է ինքնատիպ եւ հարմարեցված լուծումներ՝ նշելով, որ այդ հնարավոր լուծումների վրա է աշխատում ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ որպես համապատասխան մանդատով օժտված կառույց:

«Այս կարճ եւ ոչ պաշտոնական այցերը մեզ մեկ հստակ բան սովորեցրին՝ բոլոր մայրերը, ինչպես նաեւ բոլոր այն ղեկավարները, ում հետ մենք գրուցել ենք, խաղաղություն են ուզում»,- նշում են պատգամավորները եւ հավելում. «Բայց մենք պարզեցինք նաեւ, որ Լեռնային Ղարաբաղը բաց ժողովրդավարություն է՝ իր անհամաձայնությունն ազատ արտահայտող ընդդիմությամբ, ինչպես նաեւ լրատվամիջոցների բազմակարծությամբ: Վերջերս ներկա ենք գտնվել այնտեղ անցկացված սահմանադրական հանրաքվեին, որի ժամանակ դիտարկել ենք ընտրական գործընթացների համապատասխանությունը միջազգային չափանիշներին»:

Իրենց խոսքն արժեւորելու համար պարսիկներն անգամ Շուրիշկանի Ավետարանն էին վկայակոչում. Այն այսօր կրկին Մուղնիում էր

Մուղնու Սուրբ Գեորգ եկեղեցին այսօր մարդաշատ էր. հավատացյալները հավաքվել էին Շուրիշկանի Ավետարան անունով հայտնի Բարսեղ Կեսարացու ավետարանը տեսնելու:

2005 թվականից ի վեր Քրիստոսի Հարության տոնին հաջորդող կիրակի՝ Կրկնագատկին, հրաշագործ գործություն ունեցող Շուրիշկանի Ավետարանը Մատենադարանից Արագածոտնի թեմի Մուղնու Մուրթ Գեւորգ եկեղեցի է բերվում:

Ավանդապատումների համաձայն՝ Շահ-Աբասի բռնի տեղահանության ժամանակ հայերն Ավետարանն Օշականից տարել են Պարսկաստան, եւ մինչեւ Հայաստան վերադարձնելը դարեր շարունակ Ավետարանը պահվել է Պարսկաստանի հայաբնակ Փերիա գավառի Շուրիշկան գյուղում, որտեղից էլ ստացել է իր անվանումը:

Ավետարանը գրվել է 1498 թվականին Վասպուրականի Զաքրերունի գավառում: Դրա գործության մասին բազմաթիվ պատմություններ կան: Ասում են՝ այն հիվանդություններ է բուժում, ցանկություններ կատարում: Ավետարանի գործության փառքը ժամանակին հասել է մինչեւ Հնդկաստան: Տարբեր բնակավայրերից գալիս էին Շուրիշկան՝ հրաշագործ Ավետարանի գործությամբ բուժվելու:



Ծնունդով Շուրիշկանից Շահեն Մանուկյանն ասում է նույնիսկ պարսիկները, իրենց խոսքն արժեւորելու համար, այս Ավետարանն էին վկայակոչում. «Երդվում են Շուրիշկանաց Ավետարանով, որ սուտ չեմ ասում»:

Ավետարանը բազմաթիվ անգամներ վտանգի տակ է եղել, նրա գործության մասին իմանալով շատերն են փորձել այն յուրացնել: Շուրիշկանցի Ասատուր Գրիգորյանը պատմում է, որ Ավետարանը երկու անգամ գողացել են: Մեկ անգամ նույնիսկ գողանալուց հետո աղքյուրի կողքին հողի մեջ են թաղել, բայց յոթ տարի այնտեղ մնալուց հետո էլ Ավետարանը չի վնասվել: Այս պատմության ճշմարտացիության վկայությունը միայն խոնավությունից խուճացած երկու էջերն են:

Շուրիշկանի Ավետարանը կազմված է 322 էջից, զարդարված է մանրանկարներով, կաշվե կազմը պատված է արծաթե սկանակուռ կրկնակազմով:

Իրանի փոխնախագահը եւ Վրաստանի վարչապետը կքննարկեն Հայաստանի տարածքով էներգետիկ միջանցքի հարցը

Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլիի Թեհրան այցի ժամանակ Պարսից ծոց-Մեւ ծով տարանցիկ միջանցքի հարցը կլինի Իրանի փոխնախագահ Էսհաք Ջահանգիրի բանակցությունների կենտրոնում, հայտնում է Mehr գործակալությունը:

«Բանակցությունների գլխավոր առանցքը կլինեն Հյուսիս-Հարավ եւ Պարսից ծոց-Մեւ ծով տարանցիկ միջանցքները՝ Իրանի, Հայաստանի եւ Վրաստանի կամ Իրանի,

Ադրբեջանի եւ Վրաստանի տարածքներով»,- ընդգծել է Ջահանգիրին:



Նրա խոսքով եւս մեկ կարեւոր հարց վերաբերում է էներգետիկ միջանցքի ստեղծմանը՝ Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի եւ Իրանի միջեւ ձմեռային եւ ամառային ժամանակաշրջաններում էլեկտրաէներգիայի փոխանցման համար:

Կիրապարակվի Հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթերի 3 հատորները. Ամատունի Վիրաբյան



Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանն ու իր թիմի անդամները մտադիր են առաջիկայում ավարտել Հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթերի երեք հատորների հրապարակումը:

Այսօր՝ ապրիլի 22-ին, հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ Վիրաբյանը նշեց նաեւ, որ շարունակում են Ցեղասպանության գոհերի շտեմարանի ստեղծման աշխատանքները:

«Տասնյակ հազարավոր մարդկանց անուններ ունենք, աշխատանքները շարունակվում են, դրանք տարիների երկարաժամկետ աշխատանք է եւ չեմ կարող ասել, թե մի օր այն կավարտենք, քանի որ նոր անուններ, փաստեր են ի հայտ գալիս: Դա էլեկտրոնային տարբերակով է եւ եթե որոշակի քանակի հասնեն՝ երեք հարյուր հազարի, ապա կտեղադրենք», - ասաց նա:

Նշենք, որ մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին ընդառաջ Հայաստանի ազգային արխիվը նախատեսում է լուսանկարների քարտեզներ, տեսանյութերի, փաստաթղթերի ցուցահանդես, որը փորձելու են տարբեր երկրներում ներկայացնել:

«Հայոց ցեղասպանության ճանաչումը, հատուցումը մեկ-երկու տարվա խնդիր չէ, տասնամյակների խնդիր է», - ասաց Ամատունի Վիրաբյանը՝ նշելով, որ բոլոր նյութերը թարգմանվելու են տարբեր լեզուներով համաշխարհային հանրության համար:

Յեղասպանությունը չճանաչած երկրներն իրենց զարգացած համարելու իրավունք չունեն. եզդիների հոգեւոր առաջնորդ



Եթե Թուրքիան չճանաչի հայոց Յեղասպանությունը, ապա մարդկության համար այդ չարիքը կշարունակվի ամբողջ աշխարհում: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ապրիլի 22-ին հայտարարել է «Հայաստանի Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպության նախագահ Ազիզ Թամոյանը:

Նրա խոսքով՝ առաջադեմ մարդկությունը դատապարտում ու ընդունում է ցեղասպանությունը: «Միջազգային կազմակերպությունները պետք է զբաղվեն այդ խնդրով: Թուրքիան պետք է ճանաչի հայ ժողովրդի նկատմամբ Յեղասպանություն գործելու փաստը: Եթե Թուրքիան դա չանի, մարդկության համար այդ չարիքը կշարունակվի: Մենք պետք է ամբողջ աշխարհին ցույց տանք, որ ցեղասպանություն է տեղի ունեցել: Մենք մշտապես պետք է մեր ձայնը բարձրացնենք, որպեսզի նման երեւոյթներ այլևս չլինեն», - ընդգծել է Ազիզ Թամոյանը:

Հանդիպման մեկ այլ մասնակից՝ Հայաստանի եզդիների հոգեւոր առաջնորդ Բրո Հասանյանը, իր հերթին, նկատել է. «Եթե իրենց ռաջադիմական համարող երկրները չեն ճանաչում հայոց Յեղասպանությունը, նրանք իրավունք չունեն իրենց զարգացած պետություններ համարել: Պատմական բոլոր փաստերով ապացուցված է, որ Թուրքիան Արեւմտյան Հայաստանում ցեղասպանություն է իրականացրել: Իսրայելը էս հողոքոստ է տեսել, բայց հայոց Յեղասպանությունը չի ճանաչում: Քանի դեռ Հայոց ցեղասպանությունը չի ճանաչվել ու չի դատապարտվել, աշխարհում դեռ կկրկնվեն բազմաթիվ ցեղասպանություններ»:

ԱՄՆ-ում Արցախի մշտական ներկայացուցիչը Ֆլորիդայի համալսարանում հանդես է եկել դասախոսությամբ



ԱՄՆ-ում Արցախի մշտական ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը Ֆլորիդայի միջազգային համալսարանում հանդես է եկել դասախոսությամբ:

Արցախի ԱԳՆ մամուլի ծառայության հաղորդմամբ՝ դասախոսությանը ներկա են եղել միջազգային

հարաբերությունների և քաղաքագիտության ֆակուլտետների ուսանողներն ու դասախոսները:

Ռոբերտ Ավետիսյանը ներկայացրել է դարաբաղյան հակամարտության պատմությունը, կարգավորման այժմյան ընթացքը, անդրադարձել նաև տարածաշրջանային այլ հարցերի:

Հանդիպման ավարտին Արցախի ներկայացուցիչը պատասխանել է հակամարտության խաղաղ կարգավորմանը, Արցախի միջազգային ճանաչմանը և պետականաշինության գործընթացին վերաբերող հարցերին:

Այսօր լրանում է Արթուր Մկրտչյանի մահվան 25-րդ տարեկիցը. պատգամավորներն այցելել են նրա շիրիմին



Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներն այսօր՝ ապրիլի 14-ին, այցելել են Ստեփանակերտի հուշահամալիր և ծաղիկներ խոնարիել Արցախի պետական-քաղաքական գործիչ, ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի շիրիմին:

ԱԺ մամուլի ծառայությունից հայտնում են, որ այսօր լրանում է Արթուր Մկրտչյանի մահվան 25-րդ տարեկիցը: «Թող ոչ մեկի մտքով չանցնի, թե Ղարաբաղում հայ չապրելով՝ Ղարաբաղը կարող է Հայաստանի մաս դառնալ: Հողը նրանն է, ով այդ հողի վրա ապրում և պաշտպանում է այն», - սա էր նրա համոզմունքը:

Արցախում ցանկացած հուշարձան, այդ թվում պարսկական մզկիթը, Արցախի ժողովրդի սեփականությունն է. փոխնախարար



Արցախում գտնվող ցանկացած պատմամշակութային հուշարձան Արցախի Հանրապետության ժողովրդի սեփականությունն է, և այդ թվում՝ պարսկական մշակութային հուշարձանների պահպանությունը, ուսումնասիրումն ու վերականգնումը մեր առաջնահերթ խնդիրներից է: Այս

մասին հայտարարություն է տարածել ԼՂՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Սերգեյ Շահվերդյանը՝ անդրադառնալով Շուշիի Գոհար Աղա /Վերին Ջումա/ Մզկիթի շրջակայքում հնագիտական պեղումների, մզկիթի եւ վերականգնողական աշխատանքների վերաբերյալ Ադրբեջանում շրջանառվող մեկնաբանություններին: Հայտարարությունում ասվում է.

«2015 թվականից Արցախի Հանրապետությունը միացել է Հնագիտական ժառանգության պահպանության մասին եվրոպական եւ Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության կոնվենցիաներին, ինչը նշանակում է, որ այդ բնագավառում արցախյան կողմն իր վրա է վերցրել պարտավորություններ, որոնց անվերապահորեն հետեւում է: Շուշիի Վերին Մզկիթի վերականգնման աշխատանքների ամբողջ գործընթացը համապատասխանում է վերոհիշյալ կոնվենցիայի դրույթներին:

Յանկանում եմ հատկապես ընդգծել, որ Արցախի Հանրապետությունում պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրման եւ վերականգնման ծրագրերը մշակվում եւ իրականացվում են անկախ ցանկացած երրորդ կողմի վերաբերմունքից եւ մեկնաբանություններից»:

Մարաղայի հանցագործությունների անպատժելիությունը նպաստեց ամենաթողության մթնոլորտի ձեւավորմանը. Շավարշ Քոչարյան



Արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը մեկնաբանություն է տարածել Մարաղայի ողբերգության 25-րդ տարելիցի կապակցությամբ:

«Այս օրը խորհրդանշում է դարաբաղյան պատերազմի ամենամռայլ, սակայն ոչ այդքան հայտնի էջերից մեկը, երբ 25 տարի առաջ ադրբեջանական կողմն իր գործողություններով կոպտագույն ոտնահարեց միջազգային հումանիտար իրավունքը:

1992թ. ապրիլի 10-ին ադրբեջանցի օմոնականներն ավերեցին ու հրկիզեցին ինքնորոշված Արցախի Հանրապետության Մարաղա գյուղը, ողջակիզեցին ու անմարդկային դաժանություններով տանջամահ արեցին խաղաղ բնակիչներին, իսկ մի մասին էլ՝ գերեվարեցին. ընդ որում՝ նրանցից ոմանց ճակատագիրը մինչ օրս մնում է անհայտ:

Մի քանի ժամ ադրբեջանական վերահսկողության տակ հայտնված գյուղի բնակիչներն վերապրեցին ողջ այն վայրագություններն ու բարբարոսությունը, որոնք իրավամբ համապատասխանում են մարդկության դեմ հանցագործության բոլոր չափորոշիչներին:

Մարաղայում իրականացված հանցագործությունների անպատժելիությունը նպաստեց ամենաթողության մթնոլորտի ձեւավորմանը եւ նոր հանցագործությունների իրագործման շարունակությանը: Դրա անհերքելի ապացույցն են Արցախի դեմ անցած տարվա սպրիին ձեռնարկված ագրեսիայի ժամանակ ադրբեջանական զինուժի կողմից իրականացված բարբարոս քայլերը»:

Յուրի Խաչատուրովը նշանակվել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղար

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղարի պաշտոնը 2017-ի մայիսի 2-ից կատանձնի Յուրի Խաչատուրովը: Այս մասին հաղորդում է «ՌԻԱ Նովոստի»-ն վկայակոչելով կազմակերպության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վալերի Մեմերիկովին:

«Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գլխավոր քարտուղարի նշանակելու հարցը քննարկելիս որոշում է ընդունվել այդ պաշտոնում մայիսի 2-ից նշանակել Խաչատուրով Յուրի Գրիգորեւիչին», -ամփոփելով ՀԱՊԿ ոչ պաշտոնական գազաթնամոտորը՝ լրագրողներին ասել է Մեմերիկովը:

Նա նաև հայտնել է, որ պետության ղեկավարները որոշում են ընդունել ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորյույովի պարգևատրել ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի գերագանցության I աստիճանի նշանով:

Նրա խոսքով՝ ոչ պաշտոնական գազաթնամոտորի ընթացքում ՀԱՊԿ անդամ երկրների նախագահները քննարկել են «ՀԱՊԿ-ի պատասխանատվության ներքո գտնվող ռազմաքաղաքական ու ռազմամարտավարական հանգամանքների շուրջ հարցերն ու մի շարք լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել՝ անվտանգության սպառնալիքներին հակազդելու հետ կապված»:

Նշենք, որ Յուրի Խաչատուրովը 2008-2016 թվականներին եղել է ՀՀ Չինված ուժերի գլխավոր շտաբի պետը: իսկ 2016-ի հոկտեմբերին նշանակվել է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար:

Մարսելում հրապարակ կանավանակոչեն Սողոմոն Թեհլերյանի պատվին



Ֆրանսիայի Մարսել քաղաքի հրապարակը պաշտոնապես կանվանակոչվի Սողոմոն Թեհլերյանի պատվին, հայ, որը սպանել է Հայոց ցեղասպանության զանգվածային արտաքսման կամակերպիչներից մեկին՝ Թալեթ փաշային: Այս մասին հայտնում է Armenian Weekly-ն:

Մարսելի քաղաքապետ Ժան-Կլոդ Գոդենը, մի քանի հասարակական եւ քաղաքական գործիչներ, նաեւ Ֆրանսիայի հայ համայնքի ներկայացուցիչները կմասնակցեն նախագծի պաշտոնական արարողությանը,

որը տեղի կունենա ապրիլի 21-ին: Միջոցառումը կազմակերպում է Մարսելի քաղաքապետարանը՝ Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգման խորհրդի հետ միասին:

Հարկ է նշել, որ Թեհլերյանի ամբողջ ընտանիքը Յեղասպանության ժամանակ ոչնչացվել է: Նա ինքն ականատես է եղել 2 քույրերի բռնաբարությանը եւ մոր ու եղբոր սպանությանը: Թեհլերյանին հաջողվել է ողջ մնալ, երբ թուրք զինվորները նրան թողել են մահանալու վիրավորների եւ մահացածների կույտում:


Թեհլերյանը հայտնվել է Կոստանդնուպոլսում, որտեղից 1920 թվականին արտագաղթել է ԱՄՆ: Պատերազմից հետո Թեհլերյանը Դաշնակցություն կուսակցության հանձնարարությամբ («Նեմեսիս» գործողություն) ուղևորվել է Բեռլին եւ 1921 թվականի մարտի 15-ին բազմաթիվ վկաների ներկայությամբ գնդակահարել նախկին մեծ վեզիր Տալեաթ փաշային:

Սպանությունից հետո Թեհլերյանին գերմանական իշխանությունները կալանավորել են:

Թեհլերյանի դատավարությունը եւ նրա արդարացումը սենսացիա են դարձել: Դատաքննության նյութ է դարձել ոչ միայն Թեհլերյանի գործողությունը, այլև՝ Թալեաթի, որպես խաղաղ բնակչության զանգվածային վայրագ սպանությունների կազմակերպիչ:

Դատարանը որոշել է, որ Թեհլերյանը սպանության պահին գործել է անմեղսունակության վիճակում, ավելի ուշ նա ազատ է արձակվել:

Ստորագրվել է Հայաստանի եւ Չինաստանի ՊՆ-ների 2017թ. համագործակցության ծրագիրը



Ապրիլի 11-ից 14-ը աշխատանքային այցով Հայաստանի Հանրապետությունում եր գտնվում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կենտրոնական ռազմական խորհրդի միջազգային ռազմական համագործակցության գրասենյակի պետ, դերժովակալ Գուան Յուֆեյի գլխավորած պատվիրակությունը:

ՊՆ-ից հայտնում են, որ այցի ընթացքում ՉԺՀ պատվիրակությանն ընդունել են ՀՀ ՉՈՒ գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը, պաշտպանության նախարարի տեղակալ-Ռազմարդյունաբերության պետական կոմիտեի նախագահ Դավիթ Փախչանյանը եւ ՊՆ պաշտպանական քաղաքականության վարչության պետ Լեւոն Այվազյանը:

Պաշտոնական հանդիպումների ընթացքում քննարկվել են պաշտպանության ոլորտում հայ-չինական համագործակցության ներկա ընթացքն ու զարգացման

հեռանկարները, միջազգային եւ տարածաշրջանային անվտանգության խնդիրներ, երկկողմ հետաքրքրություններ կայացնող այլ հարցեր: Չեռք են բերվել պայմանավորվածություններ պաշտպանության ոլորտում համագործակցությունն ընդլայնելու, մի շարք փոխազդեցիկ նախագծեր իրականացնելու ուղղությամբ:

Այցի ավարտին ՉԺՀ բարձրաստիճան պատվիրակությանը, ՀՀ-ում ՉԺՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Թյան Էրյունի ուղեկցությամբ, ընդունել է ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը: Հանդիպման ընթացքում քննարկվել եւ ամփոփվել են բանակցությունների արդյունքներն ու ձեռք բերված պայմանավորվածությունները: Բարձր գնահատելով երկու երկրների միջեւ առկա քաղաքական բարձր մակարդակի հարաբերությունները, ՀՀ պաշտպանության նախարարն ընդգծել է կողմերի միջեւ փոխգործակցության ընդլայնման եւ նոր ոլորտների ներգրավման կարելորդությունը:

Հանդիպման ավարտին ՊՆ պաշտպանական քաղաքականության վարչության պետ Լեւոն Այվազյանը եւ դերժովակալ Գուան Յուֆեյը ստորագրել են ՀՀ պաշտպանության նախարարության եւ ՉԺՀ պաշտպանության նախարարության միջեւ 2017թ. համագործակցության ծրագիրը:

Իրանի առաջարկած տրանսպորտային միջանցքը կարող է Հայաստանի համար տնտեսական խթան դառնալ. Փորձագետ



Իրանի կողմից առաջարկած տրանսպորտային միջանցքը, որը կկապի Պարսից ծոցն ու Սեւ ծովը, Հայաստանի համար տնտեսական խթան կարող է հանդիսանալ: Այս մասին ապրիլի 21-ին հայտարարել է Հայաստանի հայրենական սպորանք արտադրողների միության նախագահ Վազգեն Սաֆարյանը:

Նրա խոսքով՝ Հայաստանը ճիշտ եզրահանգումներ պետք է անի եւ ճիշտ քայլեր ձեռնարկի: «Այժմ Իրանը Եվրասիական տնտեսական միության հետ մերձեցման փորձեր է ձեռնարկում: Դրան զուգընթաց մենք Մեդրին կհայտարարենք ազատ առևտրի գոտի: Այդ ենթատեքստում նշված նախաձեռնությունը կարող է հող նախապատրաստել տնտեսական հարցերը լուծելու համար», - նշել է Սաֆարյանը:

Հիշեցնենք, որ Իրանի արտաքին գործերի նախարար Մոհամադ Չավադ Չարիֆը Պարսից ծոցը Սեւ ծովի հետ կապող միջանցք ստեղծելու առաջարկությամբ է հանդես եկել ու ընդգծել չորս երկրների համագործակցության կարելորդությունը՝ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Իրանի:

Թուրքիան ուզում է Նախիջեւանում ռազմաբազա ստեղծել. Արման Նավասարդյան



Թուրքիան մտադիր է Նախիջեւանում ռազմական բազա ստեղծել: Այս մասին, այսօր՝ ապրիլի 28-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է Արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Նավասարդյանը՝ անդրադառնալով տարածաշրջանում տեղի ունեցող վերջին զարգացումներին: Նրա խոսքով, թուրքական քաղաքական միտքը մեսիջ է ուղարկում առաջին հերթին Հայաստանին եւ Ռուսաստանին, որ քանի որ Հայաստանն ու Ռուսաստանը սերտ ռազմական համագործակցություն ունեն, ուստի Թուրքիան առաջարկում է ավելի խորացնել համագործակցությունը եւ Նախիջեւանում ռազմական բազա ստեղծելու մտադրություն է հայտնում:

Արման Նավասարդյանը նկատեց, սակայն, որ Ղարսի պայմանագրի 5-րդ կետը բացառում է որեւէ ռազմական միավորման տեղակայումը Նախիջեւանում. «Ավելին՝ 4-րդ հոդվածում ասվում է, որ եթե նման քայլի դիմեն Թուրքիան եւ Ադրբեջանը, ուրեմն վերանայվում են այն սահմանները, որ 20-ականներին ունեցել է Թուրքան: Այսինքն՝ կարող են կորցնել ամբողջականությունը, եթե նման քայլի գնան»:

Դեսպանի ներկայացմամբ, Թուրքիան հույս ունի, որ ԱՄՆ-ն դրական կվերաբերվի իր մտադրությանը, սակայն դա այնքան էլ հիմնավոր չէ: Բացի այդ, ըստ նրա, Իրանը բացարձակապես դեմ կլինի նման որոշմանը:

Իսպանիայի Վիլենա քաղաքը պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը



Իսպանիայի Վիլենա (Villena) քաղաքը պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը՝ համարելով այդ մեծագույն հանցանքը դատապարտած իսպանական շուրջ երեք տասնյակ քաղաքների ցանկը:

Այդ մասին հայտնում են Իսպանիայում Հայաստանի դեսպանատնից:

Քաղաքային խորհրդում ներկայացված կուսակցությունների քվեարկության արդյունքները հետեյալն են՝ Կանաչներ

Եվրոպա՝ կողմ, 11 ձայն: Ժողովրդական կուսակցություն՝ դեմ, 7 ձայն: Սոցիալիստական կուսակցություն՝ ձեռնպահ, 3 ձայն:

Կոլորադոյի օրենսդրական ժողովը Հայոց ցեղասպանության 102-րդ տարեկիցի հետ կապված բանաձեւ է ընդունել



ԱՄՆ Կոլորադո նահանգի օրենսդրական ժողովը բանաձեւ է ընդունել՝ կապված Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության 102-րդ տարեկիցի հետ:

Ապրիլի 26-ին ընդունված բանաձեւում խորհրդարանականներն աջակցություն են հայտնել «Հայաստանի եւ նրա հարեւանների միջեւ կառուցողական եւ երկարատեւ հարաբերություններին՝ հիմնված փաստերի եւ Հայոց ցեղասպանության գոյություն ունեցող հետեւանքների ճանաչման վրա», - հայտնում է thedenverchannel.com-ը:

Ամերիկայի Հայ դատի գրասենյակի արեւմտյան թեքը երախտագիտություն է հայտնել խորհրդարանականներին հայ համայնքին իրենց աջակցության համար: Ավելի վաղ Կոլորադոյն Հայոց ցեղասպանությունը ճանաչել է:

Հայոց ցեղասպանությունը ճանաչման ոլորտից տեղափոխվեց հատուցման ոլորտ. փորձագետ



Հայոց ցեղասպանությունը ճանաչման ոլորտից տեղափոխվեց հատուցման ոլորտ: Այս մասին, այսօր՝ ապրիլի 25-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է Սահմանադրական դատարանի խորհրդական, Հայոց ցեղասպանության իրավական հետազոտությունների կենտրոնի համակարգող Վլադիմիր Վարդանյանը:

Նրա խոսքով, Հայոց ցեղասպանության ճանաչման հետ կապված տարբեր երկրներում հետաքրքիր զարգացումներ են ընթանում: Մասնավորապես, Եվրոպայում փորձ արվեց քրեականացնել Ցեղասպանության ժխտումը, բայց դա այնքան էլ հաջողված փորձ չէր, քանի որ, օրինակ

Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդը մերժեց այն համարելով Ֆրանսիայի սահմանադրությանը չհամապատասխանող:

Մյուս կողմից, ըստ Վարդանյանի, հետաքրքիր գործընթացներ են տեղի ունենում ԱՄՆ-ում, որտեղ ընթանում են գույքային պահանջներով դատավարություններ. «Թեև այստեղ էլ բախվում ենք որոշակի քաղաքական ճնշումների, տեխնիկական դատավարական խոչընդոտների»:

Վարդանյանի խոսքով Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում հաջողության հասնելու համար պետք է աշխատել բոլոր ուղղություններով, այդ թվում նաև թուրք հասարակության վրա բարոյական ճնշում գործադրելով:

Թրամփը կրկնեց Օրամայի «Մեծ եղեռն» եզրույթը

Այսօր մենք հիշում եւ ոգեկոչում ենք 20-րդ դարի վատթարագույն զանգվածային վայրագություններից մեկի՝ Մեծ Եղեռնի տառապանքների բովոլ անցածներին: Այս մասին ասվում է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝ Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցի առթիվ արված ուղերձում:



«1915թ. սկսած՝ Օսմանյան կայսրության վերջին տարիների ընթացքում, մեկ ու կես միլիոն հայեր զոհ են գնացել տեղահանություններին, կոտորածներին ու մահվան երթերին: Ես միանում եմ Ամերիկայի հայկական համայնքին եւ աշխարհասփյուռ հայությանը՝ սգալու կորսված մարդկային անմեղ կյանքերի ու կրած բազում տառապանքների վիշտը», - հայտարարել է նաև հավելել. «Այսօր մենք հիշում եւ ոգեկոչում ենք 20-րդ դարի վատթարագույն զանգվածային վայրագություններից մեկի՝ Մեծ Եղեռնի տառապանքների բովոլ անցածներին»:

Թրամփի խոսքով, մարդկության պատմության այդ մռայլ իրադարձությունների մասին մտորելիս «արժանին ենք մատուցում հայ ժողովրդի աննկուն ոգուն»:

«Շատերը նոր կյանք կերտեցին Միացյալ Նահանգներում եւ իրենց անջնջելի ներդրումն ունեցան մեր երկրում՝ իրենց սրտում վառ պահելով հիշողությունները պատմական հայրենիքի մասին, որտեղ նրանց նախնիները կերտել էին հնագույն հզոր քաղաքակրթություններից մեկը:

Մենք պետք է հիշենք վայրագությունները, որպեսզի թույլ չտանք դրանց կրկնությունը: Մենք ողջունում ենք ցավալի անցյալի փաստերն ընդունելու ու դրանց հետ հաշվի նստելու ջանքերը, որ ձեռնարկվում են հայերի ու թուրքերի կողմից՝ որպես առավել արդարացի ու հանդուրժողական ապագայի համար հիմքեր նախապատրաստելու հույժ կարեւոր քայլ», - ասված է հայտարարությունում:

Անկարան դժգոհ է Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցի առթիվ Թրամփի հայտարարությունից

Անկարան դժգոհ է Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցի առթիվ Թրամփի հայտարարությունից: Թուրքիայի ԱԳՆ-ի հայտարարության մեջ նշվում է, որ Անկարան ակնկալում էր, որ ԱՄՆ նոր վարչակազմը հաշվի կառնի «Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում օսմանյան թուրքերի ու հայերի տառապանքները»:

Հավատարիմ մնալով Հայոց ցեղասպանության ցինիկ ժխտման բազմամյա հռետորաբանությանը՝ Թուրքիայի ԱԳՆ-ն «ԱՄՆ-ի որոշակի շրջանակներին» հերթական անգամ մեղադրել է քարոզչության մեջ, որը դարձել է «ապատեղեկատվության» ու Թրամփի հայտարարության մեջ «կեղծ հավաստիացումների» պատճառը: Թուրքիայի ԱԳՆ-ն կոչ է անում ամերիկյան վարչակազմին չգրադեցնել «միակողմանի դիրքորոշում» ու հաշվի առնել «բոլոր կողմերի տառապանքները»:

Ստամբուլում տեղի է ունենում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի միջոցառում



Ստամբուլի Սուլթանահմեդի շրջանում թուրք-իսլամական ստեղծագործությունների թանգարանի դիմաց տեղի է ունենում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառում:

Իրանի հայերը բողոքի ակցիա են անցկացրել. Պահանջում ենք Թուրքիայից ճանաչել Հայոց ցեղասպանությունը

Իրանի հայկական համայնքի անդամները այսօր Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին նվիրված միջոցառում են անցկացրել Սուրբ Սարգիս հայկական եկեղեցու մոտ, պահանջելով Թուրքիայից ճանաչել Հայոց ցեղասպանությունը, հայտնում է Ruptly TV-ը:

Ցուցարարները վանկարկում էին հակաթուրքական կարգախոսներ, նաև ձեռքներին պահում էին պաստառներ, որոնց վրա գրված էր «Թուրքիան մեղավոր է Սիրիայում մարդկության դեմ հանցագործությունների մեջ» ու «1915-ի Հայոց ցեղասպանության» համար:

Վերջ տալ ժխտողականությանը. Թուրքիայի մարդու իրավունքների միություն



Թուրքիայի մարդու իրավունքների միությունը (IHD) Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցի հետ կապված հայտարարություն է տարածել:

«Արդարության ու ճշմարտության համար վերջ տալ Հայոց ցեղասպանության ժխտմանը» վերնագրով հայտարարության մեջ նշվել է, թե ժխտողականությունը ամենատարածված մարդու իրավունքների խախտումն է, քանի որ դրանով խթանում ու համարձակություն է տալիս անհամար խախտումների: «Ցեղասպանության ժամանակ բացի մարդկանց կոտորելուց, վերացվել են նաև մշակույթային ժառանգություններն ու թալանվել հայերի ունեցվածքը»-նշվել է հայտարարության մեջ:

Երեւանում տեղադրվել են Ցեղասպանությունը ճանաչած երկրների դրոշներով ինստալյացիաներ



Երեւանում տեղադրվել են Ցեղասպանությունը ճանաչած երկրների դրոշներով ինստալյացիաներ:

Քաղաքապետարանից հայտնում են, որ Ցեղասպանության հուշահամալիր տանող ճանապարհին եւ Ազատության հրապարակի սկզբնամասում տեղադրվել են Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետությունների դրոշներով քաղաքային ինստալյացիաներ:

Գաղափարի հեղինակները նաև «Հաջորդը կարող է լինել Ձեր երկիրը» երկլեզու գրառումով դատարկ հատվածներ են թողել՝ ապագայում Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող երկրների համար:

Գլեդիս Բերեջիկյան. Ես Հայոց ցեղասպանությունը վերապրածների թոռնուհին եմ

Նոր Հարավային Ուելս նահանգի վարչապետ Գլեդիս Բերեջիկյանը մասնակցել է Միդնեյում անցկացված միջոցառմանը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին:

Իր ելույթում նա նշել է, որ ինքը հպարտ ավստրալացի հայուհի է, որը Հայոց ցեղասպանությունը վերապրածների թոռնուհին է: Նա հավելել է, որ Հայոց ցեղասպանության

գոհերը աներեւակայելի վայրագությունների են ենթարկվել՝ միայն այն պատճառով, որ հայ էին:



Չնայած բոլոր դժվարություններին, հայերին հաջողվել է տարբեր երկրներում նոր կյանք սկսել:

Գլեդիս Բերեջիկյանը կոչ է արել ճանաչել Հայոց ցեղասպանությունը: «Նրանք կարող էին արդյոք 1915 թվականին պատկերացնել, որ իրենց թոռներից մեկը կարող է մի օր աշխարհ մեկ այլ ծայրում նահանգ կառավարել»,- հայտարարել է Բերեջիկյանը:

Միջոցառմանը մասնակցել են նաև Դաշնային խորհրդարանի անդամ, «Ավստրալիա-Հայաստան» խորհրդարանական բարեկամական խմբի նախագահ Թրենթ Չիմերմանը, պատգամավոր Քրեյգ Քելլին, քաղաքական այլ դեմքեր:

Սկանդալ ԵԽԽՎ-ում. պահանջում են կառույցի ադրբեջանամետ նախագահ Պեդրո Ազրամունտի հրաժարականը

Եվրոպայի խորհրդի խորհրդանական վեհաժողովի այսօրվա նիստն աննախադեպ ընթացք է ունեցել. նիստում պահանջել են ԵԽԽՎ գործող նախագահ, ադրբեջանամետ գործիչ Պեդրո Ազրամունտի հրաժարականը:

ԵԽԽՎ-ում հայաստանյան պատվիրակության անդամ, ՀՀԿ խմբակցության պատգամավոր Սամվել Ֆարմանյանը NEWS.am-ի թղթակցի հետ գրույցում նշեց, թե ԵԽԽՎ բոլոր քաղաքական խմբերի առավոտյան նիստերը նվիրված են եղել Պեդրո Ազրամունտի շուրջ զարգացող իրավիճակին: Բոլոր խմբերը համակարծիք են եղել, որ Պեդրո Ազրամունտն իր գործողություններով կորցրել է վստահությունը եւ, ըստ էության, գործ ունեն քաղաքական հասունացող ճգնաժամի հետ:

«Քաղաքական խմբերի նիստերից հետո Սոցիալիստների խմբակցությունը հանդես է եկել հայտարարությամբ՝ ըստ էության պահանջելով Պեդրո Ազրամունտի հրաժարականը: Մենք, որպես ԵԺԿ խմբակցություն, համանման որոշում ենք կայացրել, որի արդյունքում Պեդրո Ազրամունտը եւ նրան ուղեկցող երկու անձինք, որոնց, Ռոբերտ Ուոլթերի եւ Միլիցա Մարկովիչի հակահայ գեկույցներից սկսած, հայ հանրությունը հիշում էր որպես ադրբեջանամետ լոբբիստների, պետք է հրապարակային բոլոր խմբերի հարցերին պատասխանեն հանրային լուսնների ձեւով, որ պետք է տեղի ունենա վաղն առավոտյան»,- նշեց Ֆարմանյանը:

Նրա խոսքով՝ ԵԽԽՎ նստաշրջանն այսօր սկսվել է աննախադեպ իրավիճակով, երբ ԵԽԽՎ մեծաթիվ անդամներ, այդ թվում եւ ինքը՝ Ֆարմանյանը, պահանջել են Ազրամունտի հրաժարականը: «Պեդրո Ազրամունտը ստիպված էր ընդհատել նիստը, 10 րոպե ընդմիջում վերցնել, բայց ընդմիջումից հետո այլեւս չվերադարձավ ԵԽԽՎ:

նախագահություն»,- ասաց Ֆարմանյանն ու հավելեց. «Ստեղծված իրավիճակն աննախադեպ է ԵՖԽՎ պատմության մեջ, մինչ այս երբեք նման իրավիճակ չի եղել. կոնսենսուս կա բոլոր քաղաքական խմբերի մոտ, որ քաղաքական հասունացող ճգնաժամը պետք է հանգուցալուծվի Ազրամունտի հրաժարականով»:

Ըստ ԱԺ պատգամավորի՝ զուգահեռ ընթանում են քննարկումները՝ կապված ԵՖԽՎ կոռուպցիոն սկանդալների հետ: Զննարկվել է անկախ արտաքին հանձնաժողով ստեղծելու հարցը, որը, հավանաբար, բաղկացած կլինի երեք հեղինակավոր անդամներից, ՄԻԵԴ նախկին դատավորների կամ նույնախի պատասխանատու պաշտոն զբաղեցրած անձանցից, որոնք հետաքննություն կիրականացնեն ԵՖԽՎ-ի շուրջ այս տարիներին ծավալված կոռուպցիոն սկանդալների շուրջ:

«Կարծում եմ՝ երկուսն էլ լավ նորություն են մեզ համար: Քաղաքական ճգնաժամը կարող է հանգուցալուծվել միայն Պեղրո Ազրամունտի հրաժարականով, եւ տրամադրվածությունն էլ այնպիսին է, որ դա պետք է տեղի ունենա այս նստաշրջանի ընթացքում, մինչև շաբաթավերջ»,- ամփոփեց Սամվել Ֆարմանյանը:

Նշենք, որ ԵՖԽՎ-ում Ուկրաինայի պատվիրակությունը պահանջել է կառույցի նախագահ Պեղրո Ազրամունտի իմփիչմենթի գործընթաց սկսել՝ Սիրիա նրա գլխավորած պատվիրակության այցի պատճառով: Պեղրո Ազրամունտն իր հերթին հայտարարել է, որ Սիրիա իր այցելությունը սխալ էր: Ազրամունտը պարզաբանել է, որ այդ երկիր իր այցը լրատվամիջոցների կողմից շահարկումների առարկա է դարձել, նաև նշել, որ իր այցի մասին պարզաբանումներ է ներկայացրել ԵՖԽՎ բյուրոյին:

Նիստի ընթացքում ԵՖԽՎ ղեկավարին հիշեցրել են կոռուպցիոն մի շարք սկանդալների մասին, որոնցում նաև նրա անունն է շրջանառվում:

Արևմտյան Հայաստան

Թուրքիայում ապրիլի 24-ին սպանված Սեւակի ընտանիքին 11 հազար դոլար փոխհատուցում են առաջարկել



Անկարայի ռազմական բարձրագույն դատարանը որոշում է կայացրել 40 հազար թուրքական լիրա (11 հազար դոլար) փոխհատուցում վճարել 2011-ի ապրիլի 24-ին ծառայության ժամանակ ծառայակցի կողմից սպանված Սեւակ Շահին Բալըքչի ընտանիքին:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Անկարայի ռազմական բարձրագույն դատարանի որոշման մեջ նշվել է, թե 16 հազարական լիրա տրամադրվում է Սեւակի ծնողներին եւ 8 հազար լիրա էլ քրոջ:

Սեւակի ընտանիքի փաստաբան Ջեմ Հալավուրթը նշել է, թե փոխհատուցումը ծիծաղելի փոքր գումար է եւ իրենք պատրաստվում են բողոքարկել որոշումը:

Նշենք, որ 2011-ի ապրիլի 24-ի առավոտյան Սեւակն սպանվել է մեկ այլ զինծառայող՝ Քվանչ Աղաօղլուի կողմից: Սպանության հետ կապված ժանդարմերիան հայտարարել է, որ այն տեղի է ունեցել ծառայակից ընկերոջ հետ կատակ անելու ժամանակ, իբր, պատահաբար արձակված կրակոցից: Սեւակի ծնողները պնդում են, որ իրենց որդուն սպանել են ազգայնականության հողի վրա՝ հայ լինելու համար:

Սեւակ Շահին Բալըքչի սպանության գործով դատարանը 4,5 տարվա ազատազրկման է դատապարտել Սեւակի զինծառայակից Քվանչ Աղաօղլուին՝ անփութության հետեւանքով մարդ սպանելու համար:

Սակայն զինվորական վճռաբեկ դատարանը բեկանել էր վճիռն ու որոշում կայացրել գործը գրոյից վերանայել:

Դիարբեքիի պարիսպների վրա հրեշտակներ են «տեսել»

Սոցցանցերի թուրքական տիրույթում մեծ իրարանցում է առաջացրել Դիարբեքիի հզոր պարիսպների վրա 5 սպիտակ էակների տեսագրությունը, որը մակագրված է եղել «Առաջին անգամ հրեշտակները հստակ երեւացին» գրությամբ:

Ավելի ուշ պարզվել է, որ այդ 5 «հրեշտակները» պարզապես ինչ-որ տեսահոլովակի մեջ նկարահանվող դերասաններ են:

Սվյուռք

Վերջին անգամ Ջավախքի հայկական դպրոցները հայոց լեզվի եւ գրականության դասագրքեր ստացել են 5 տարի առաջ



Ջավախքի հայկական դպրոցները հայոց լեզվի եւ գրականության դասագրքերի պակաս ունեն. տարիներ շարունակ այս դպրոցները դասագրքեր չեն ստացել: Ինչպես տեղեկանում է jnews.ge-ից, մանկավարժները ահազանգում են՝ այլևս անհնար է առանց դասագրքի դաս անցկացնել, արդյունք ակնկալել աշակերտից:

Վերջին անգամ Վրաստանի հայկական դպրոցները հայոց լեզվի եւ գրականության դասագրքեր ստացել են 2015 թ. դեկտեմբերին, որոնք չեն համապատասխանել ուսումնական ծրագրին եւ չեն բաժանվել աշակերտներին: Այսինքն, կարելի է ասել, որ Ջավախքի հայկական դպրոցների աշակերտները վերջին անգամ նոր դասագիրք են ստացել 2012 թ.:

Երեւանում կայացել է «Խոստումը» ֆիլմի փակ ցուցադրությունը

«Մոսկվա» կինոթատրոնում այսօր՝ ապրիլի 23-ին կայացել է Հայոց ցեղասպանության մասին պատմող լեզենդար Քրքք Քրքքրոյանի «Survival Pictures»-ի եւ օսկարակիր կինոռեժիսոր Թերրի Ջորջի «Խոստումը» ֆիլմի հայկական կրկնօրինակմամբ հայաստանյան փակ ցուցադրությանը: Նախագահի աշխատակազմի հասարակայնության եւ տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչությունից հայտնում են, թե ֆիլմի ցուցադրությանը ներկա են գտնվել նաեւ նախագահ Սերժ Սարգսյանը եւ տիկին Ռիտա Սարգսյանը:



Ջավախքում օծվեց նորակառույց Սուրբ Խաչ եկեղեցին



Ախալքալաքի շրջանի Գումբուրդո հայաբնակ գյուղում օծվել է Էր Վիրահայոց թեմի թվով 58-րդ «Սուրբ Խաչ» գործող եկեղեցին:

Վիրահայոց թեմի լրատվական ծառայությունը հայտնում է, թե Գումբուրդո գյուղում սեփական հայկական եկեղեցի ունենալու տեղացիների 80-ամյա երազանքը վերջապես դարձավ իրականություն: 2011 թվականին Գումբուրդոյի բարեպաշտ հայորդիներ Իսաչատուր եւ Սայաթ Սահարյան եղբայրները հանձն առան իրականություն դարձնել մանկությունից իրենց ընտանիքի երազանքը՝ Իսաչ Դուռնա տեղանքում կառուցել հայկական աղոթատուն: Նպատակը սուրբ Էր. համագյուղացիներին ընձեռել հոգեւոր կանոններով եւ ծիսական արարողություններով ապրելու եւ նաեւ տեղացիների ավանդական Սուրբ Չատիկը այստեղ հավուր պատշաճի նշելու հնարավորություն: Սահարյան

ընտանիքի եկեղեցասեր եղբայրների կողմից իրականացվեցին եկեղեցու շինարարության աշխատանքները, բարեկարգվեց շրջակա տարածքը, եկեղեցին հագեցավ անհրաժեշտ գույքով եւ սրբապատկերներով: Կրկնագատկի տոնին գումբուրդոցիները Սուրբ Չատիկի տոնը նշեցին իրենց ավանդության համաձայն, այժմ արդեն Սուրբ Խաչ անունով եկեղեցում:

Եկեղեցական արարողությանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանը, Ախալքալաքի ժողովրդական ժողովի նախագահ Համլետ Մովսիսյանը, շրջանային վարչության նախագահ Էդուարդ Աղասարյանը, բարերար Սայաթ Սահարյանը, տեղացի Աղասի Սուրենյանը, պատվիրակություններ Թբիլիսիից, Երեւանից, Ռուսաստանից եւ Վրաստանի տարբեր շրջաններից, բազում հավատացյալներ:

Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ձեռամբ եւ Սամցխե-Չավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ հոգեւորի Տեր Բարգէն վարդապետ Սալբիյանի մասնակցությամբ Սրբատուրք մյուռոնով օծվեց նորակառույց Սուրբ Խաչ եկեղեցին:

Այնուհետեւ Սամցխե-Չավախքի Ախալքալաքի եւ մերձակա գյուղերի հոգեւոր հովիվ արժանապատիվ Տեր Տաթև քահանա Մարությանը մատուցեց անդրանիկ Սուրբ Պատարագը: Հընթացս Սուրբ Պատարագի կատարվեց խոստովանության կարգ եւ հավատացյալները ստացան հաղորդություն:

Հավարտ Սուրբ Պատարագի Վիրահայոց թեմի առաջնորդ դիմելով ներկաներին, գնահատանքի խոսք ասաց արժանավոր հայորդիներ Խաչիկ եւ Սայաթ Սահարյանների ազգանվեր նախաձեռնությանը, նրանց փոխանցեց Առաջնորդական օրհնության եւ գնահատանքի գիր եւ մագաղաթյա սրբապատկերով հուշանվերներ: Սրբազան Հայրն իր օրհնությունը բաշխեց նաեւ շինարարական աշխատանքների համակարգող Վալերի Սահարյանին, եկեղեցու ճարտարապետին, շինարարներին եւ այս բարի գործի բոլոր մասնակիցներին:

Ազգանվեր գործի նախաձեռնողներին շնորհակալության, իսկ տեղացիներին շնորհավորանքի խոսքով դիմեցին շրջանային իշխանության ներկայացուցիչները, հյուրերը:

Եկեղեցական արարողության ավարտից հետո հավատացյալ ժողովրդին բաժանվեց մատաղ: Եկեղեցու հարակից տարածքում Վաչիանի պարային համույթի (գեղարվեստական դեկավար Նապեթ Զեհյան) եւ Երեւանից ժամանած «Մասուն» համույթի (գեղարվեստական դեկավար՝ Անդրանիկ սարկավազ Մանուկյան) կողմից ներկայացվեց համերգային ծրագիր: Դուդուկի եւ գուռնայի հոգեմնա մեղեդիների, երգի ու պարի շնորհաշատ կատարումների ներքո օրը Գումբուրդոյում դարձավ հիրավի տոնական եւ անմոռանալի:

Ախալքալաքի շրջանի Գումբուրդո գյուղում հայերը հաստատվել են 1828 թվականից, գաղթելով Էրզրումի նահանգի Պալնի-Շակավ գյուղից: Այստեղ դեռեւս 16-րդ դարից ապրող հայերը աղոթք են արել տեղի 10-11-րդ դարի կառույց անգմբեթ տաճարին հարակից կառուցած հայկական վանքում, որը կոչել են Սուրբ Համբարձման անունով եւ որը փլատակների է վերածված: Ռուսաստանաբնակ տեղացի այլ հայորդիներ այժմ գյուղում

կառուցում են 400-աշակերտի համար նախատեսված երկհարկանի դպրոցական շենք: Գումբուրդո – թուրքերեն բառ է, որ նշանակում է արեւն այստեղ, գյուղն ունի 3 հազարից ավելի բնակիչ:



Ստամբուլի «Քամի Արմեն» մանկատան շինարարական աշխատանքները սկսվել են



Ստամբուլուհայ համայնքից իլյաժ այնուհետ երկարատև պայքարի արդյունքում հետ վերադարձված հայկական «Քամի Արմեն» անունով հայտնի մանկատան տարածքում սկսվել են շինարարական աշխատանքները:

Թուրքական Hurriyet-ի փոխանցմամբ՝ Ստամբուլի քաղաքապետ Քադիր Թոփբաշի հրահանգով արդեն սկսվել են «Քամի Արմենի» փլված հատվածի մաքրման աշխատանքները, որին կհաջորդի արդեն կառուցման աշխատանքները:

Գեղիկփաշայի հայկական բողոքական եկեղեցու հիմնադրամի նախագահ Գրիգոր Աղաբաօղլուն նշել է, թե 2015-ին իրենց վերադարձված «Քամի Արմենը» պետք է զրոյից կառուցվի, իսկ հին ու փլված հատվածի մաքրման աշխատանքների համար դիմել են Ստամբուլի ու Թուրքիայի քաղաքապետերին եւ ստացել դրական պատասխան:

«Վերանորոգումից հետո «Քամի Արմենը» կպահպանի մանկատան գործունեությունը, սակայն մի հատվածը մշակույթային կենտրոն ենք դարձնելու: Շենքի մի մասի սեփականության վկայականը դեռ չենք ստացել, սակայն հավատում ենք, որ ըստ տրված խոստման ամեն ինչ ըստ գործընթացի տեղի կունենա», -ասել է Գրիգոր Աղաբաօղլուն: Նշենք, որ Ստամբուլի «Քամի Արմեն» մանկատունը 1987-ին զավթվել է թուրքական իշխանությունների կողմից, այնուհետ վաճառվել թուրք գործարարի: Վերջինս էլ որոշել էր քանդել մանկատունը եւ էլիտար տներ կառուցել: Հասարակական ճնշման արդյունքում մանկատան քանդումը

ժամանակավորապես դադարեցվել էր, այնուհետ շենքի հիմնական մասը վերադարձվել:

Հիշյալ մանկատանն են մեծացել նաեւ Հրանտ Դինքը եւ նրա կինը՝ Ռաբել Դինքը:

Մանկատան տարածքում ամիսներ շարունակ հերթապահում են հայ ակտիվիստները:

Եգիպտոսի հայ համայնքն ապահով է, իսկ բնակչությունն ավելի շատ զայրացած, քան վախեցած. Արմեն Մազումյան



Եգիպտոսի հայ համայնքն ապահով է: Այս մասին այսօր՝ ապրիլի 10-ին ասաց Եգիպտոսի Հայ դատի հանձնախմբի անդամ Արմեն Մազումյանը:

«Եգիպտոսում վիճակը լավ է, կյանքը բնական հունով շարունակվում է: Բնակչությունն ավելի շատ զայրացած է, քան վախեցած: Իսկ հայ համայնքը ապահով է, այս պահին վտանգ չկա, ամեն ինչ բնական հունով է ընթանում», -ասաց նա:

Արմեն Մազումյանի խոսքով, Եգիպտոսում ապրիլի 9-ին Ճազիրա կղզու կիրակի առիթով երկու եկեղեցիներում ժամերգության ժամանակ տեղի ունեցած պայթյունների հետեւանքով այս պահին կա 44 զոհ եւ 100-ից ավելի վիրավոր՝ բոլորը դպտի:

«Բարերախտաբար հայեր չեն տուժել, տուժել են դպտիներ, պայթյունը տեղի է ունեցել դպտիների օրթոդոքս երկու եկեղեցում: Վերջին տվյալներով զոհվել է 44 մարդ, կա 100-ից ավելի վիրավոր», -ասաց նա:

Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ Եգիպտոսում առաջին պայթյունը որոտացել է Թանթա քաղաքի Սուրբ Գեորգ դպտիական եկեղեցում, որը Ալեքսանդրիայից 130 կմ հյուսիս-արեւելք է գտնվում: Այնտեղ տեղում 25 մարդ էր զոհվել: Եկեղեցու մեջ է եղել քրիստոնյա դպտիների պատրիարք Թեոդորոս Երկրորդը: Պաշտոնական աղբյուրները հայտնել են, որ նա չի տուժել: Որոշ ժամանակ անց տեղի է ունեցել երկրորդ ահաբեկչությունը՝ պայթյունիկ սարքը գործարկվել է Ալեքսանդրիայի Սուրբ Մարկոսի եկեղեցում: Այնտեղ զոհվել է 11 ծխական: Պայթյունների պատասխանատվությունը ստանձնել է ԻԳ-ը:

Լեհական TVP 3. Լվովի հայկական թաղամասն ամբողջ աշխարհից զբոսաշրջիկներ է գրավում

Նախապատերազմական Լվովում հայերը բնակչության 1/5-րդն էին կազմում: Նրանցից շատերը՝ Վերածնունդի բանաստեղծ Շիմոն Շիմոնին, քիմիկոս ու ինժեներ Իգնացի Լուկադին կամ էլ արքեպիսկոպոս Իսակովիչը իրենց անունը գրել են Լեհաստանի պատմության մեջ: Հիմա հանրապետությունում, տարբեր գնահատականներով, 40-80

հազար հայ է ապրում, ասվում է լեհական [TVP 3](#) հեռուստաալիքի՝ Լվովի հայերին նվիրված համաժողովի մասին ռեպորտաժում, որն անցել է Լեհաստանի արևելքում Շեշուվ քաղաքում:



Լվովի հայկական եկեղեցին գտնվում է հայկական թաղամասի կենտրոնում, որը ժամանակին քաղաքի ամենահարուստ ու գեղեցիկ թաղամասերից էր: Այն հիմա էլ է ամբողջ աշխարհից զբոսաշրջիկներ գրավում: Ու ոչ միայն եկեղեցին, այլև դրա շուրջը գտնվող տները, որոնք դարերի պատմություն ու անկրկնելի միջավայր ունեն:

Կատերինա Լոզան, Լվովի գիղերից մեկն ասում է «Չեմ կարող Լվովը պատկերացնել առանց հայկական թաղամասի: Այն այնքան ներդաշնակ է մնացած քաղաքի հետ: Քաղաքի ամենագեղեցիկ մասերից է: Այստեղ է բարսիսում Լվովի սիրտը»:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հայերի, ինչպես նաև լեհերի ճնշող մեծամասնությունը մեկնել է Լեհաստանի նախկին արևելյան շրջաններից: Յուրի Սմիրնովը, Լվովի հայերի մասին գրքի հեղինակը, կարող է անվերջ խոսել այդ մասին: Նա շեշտում է չնայած հայերը պաշտպանել են իրենց ինքնությունը, բացել հավատարիմ են մնացել Լեհաստանին:

«Նրանք Լեհաստանի մեծ հայրենասերներ են, բայց շատ նվիրված են իրենց մշակույթին ու պատմությանը», - ասում է նա: Այդ անսովոր համադրությունը շեշտում են նաև իրենք՝ հայերը: Թադեուշ Գեուրգյանը, Լվովի հայկական եկեղեցու հոգևորականը, ասում է. «Հայերը շատ են հարգում Լեհաստանն ու լեհերին, այն ամենն, ինչ կապակցված է Լեհաստանի հետ: Դրա համար էլ լեհերը ընդունում ու շեշտում են հայերի ավանդը, այլ ոչ թե լուրջան մատնում այն»: Լեհաստանում շատ են խոսում հայկական ծագումով լեհերի մասին: Նրանցից մեկն էլ Յուսեֆ Տեոֆիլ Ստոֆանովիչն է, նշանավոր բարերար: Կամ Իգնացի Լուկասեիչը, աշխարհի առաջին նավթարդյունաբերողներից մեկը:

Քայրնոգ Թադեուշ Իսակովի- Չալեսկի, հայ գրիգորյանական ու կաթոլիկ ծիսակատարությունների հազվեդրական. «Լեհաստանի հայերը շատ հետաքրքիր սոցիոլոգիական երևույթ են: Մարդիկ, որոնք իրենց մասին ասում են՝ մենք երկու հայրենիք ունենք՝ Հայաստանն ու Լեհաստանը ու երկուսն էլ հավասարաչափ սիրում ենք»:

Շերը բացատրել է, թե ինչու ԱՄՆ-ն եւ Բրիտանիան չեն ուզում ճանաչել Հայոց ցեղասպանությունը
Աշխարհառեւոյակ երգչուհի Շերը Մեծ Բրիտանիայի կառավարությանը կոչ է արել ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Շերը նշել է, որ ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի կառավարությունները չեն ճանաչել ցեղասպանությունը, քանի որ Հայաստանը ոչինչ չունի նրանց տալու», գրում է [barrheadnews.com](#)-ը:



«Մենք փոքր ենք: Հայաստանը դեպի ծով ելք չունի: Մենք նավթ չունենք: Մենք նրանց տալու ոչինչ չունենք: Որքա՞ն ժամանակ է պետք՝ Ցեղասպանությունը ճանաչելու համար», - «Խոստում» ֆիլմի պրեմիերայի ժամանակ Press Association-ի հետ զրույցում ասել է Շերը: Երգչուհին նշել է, որ հայերը ոչինչ չունեն՝ այս երկրներին հետաքրքրելու համար. «Կարելի է կարծել, որ նրանք դա կանեն իրենց բարության շնորհիվ»: Պատասխանելով հարցին, հույս ունի՞, որ Դոնալդ Թրամփը կճանաչի ցեղասպանությունը, Շերն ասել է. «Ո՛չ»:

Մահացել է Ռումինիայի թեմի ծայրագույն վարդապետ Տ. Չարեհ Պարոնյանը



Ռումինիայի Հայոց թեմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին տեղեկացվել է, որ ապրիլի 13-ի առավոտյան՝ կյանքի 76-րդ տարում, վախճանվել է Սուրբ Էջմիածնի միաբան Հոգեշնորհ Տ. Չարեհ ծայրագույն վարդապետ Պարոնյանը:

Մայր Աթոռից հայտնում են, որ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը խորապես սգում են բարեհիշատակ Չարեհ ծայրագույն վարդապետի մահը:

Ապրիլի 19-ին, Բուխարեստի Ս. Հրեշտակապետաց առաջնորդանիստ եկեղեցում, հընթացս Ս. Պատարագի կկատարվի Հայր Չարեհի վերջին օծումը, սպա հուղարկավորության արարողությունը:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Տ Չարեհ ծայրագույն վարդապետ Պարոնյանը (ավագանի անունը՝ Հակոբ) ծնվել է 1941 թ. հոկտեմբերի 2-ին Բուխարեստում (Ռումինիա): Նախնական կրթությունը ստացել է Բուխարեստի Հայկական վարժարանում (1948-1955 թթ.):

1955-1959 թթ. սովորել է Երեւանի Մանկավարժական ուսումնարանում:

1961 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Գեոքցյան հոգեւոր ճեմարան, որի լսարանական բաժինն ավարտել է 1965 թ.:

1963-1964 թթ. սովորել է Ռուս Ուղղափառ Եկեղեցու Չագորսկի հոգեւոր ակադեմիայում եւ պաշտպանել ավարտանամ` «Ստեփանոս Վարդապետ Լեհացի, կյանքն ու գործը» թեմայով:

1963 թ. սեպտեմբերին Ս. Էջմիածնում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Ս. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի:

1965 թ. հունվարին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Գերաշնորհ Ս. Ասողիկ եպիսկոպոս Գազարյանի:

1967-1970 թթ. ուսանել է Բուխարեստի Աստվածաբանական ակադեմիայում:

1969 թ. հուլիսին վարդապետական աստիճանի համար պաշտպանել է ավարտանամ՝ «Հովսեփ արքեպիսկոպոս Արղության. կյանքն ու գործը» թեմայով:

1971 թ. ծայրագույն վարդապետության աստիճանի համար պաշտպանել է ավարտանամ՝ «Տեղական ժողովները եւ իրենց տեղն ու նշանակությունը Հայ Եկեղեցու Կանոնադրության մեջ» թեմայով:

1976 թ. ստացել է Աստվածաբանության դոկտորի աստիճան՝ պաշտպանելով ավարտանամ՝ «Հայ Եկեղեցու Պատարագը Արեւելյան մյուս եկեղեցիների պատարագների շարքում» թեմայով:

1965-2001 թթ. եղել է Բուխարեստի առաջնորդանիստ եկեղեցու հոգեւոր հովիվ:

1973-2001 թթ. սպասավորել է Ռումինիայի հայոց թեմում որպես առաջնորդական փոխանորդ:

Չարեհ ծայրագույն վարդապետը հեղինակ է բազում հոդվածների եւ ուսումնասիրությունների, արժանացել տարբեր մրցանակների:

Հոլանդահայերը հանրագիր են հանձնել Նիդերլանդների խորհրդարան. կոչ են անում ընդունել Հայոց ցեղասպանությունը




Համագործակցող հոլանդահայ կազմակերպությունների պատվիրակությունը, Նիդերլանդների Հայ Դատի հանձնախումբը և այլ կազմակերպություններ հանրագիր են հանձնել Նիդերլանդների խորհրդարան՝ կոչ անելով ընդունել Հայ ցեղասպանությունը:

Հայկական կազմակերպությունների պատվիրակները ներկայացրել են հանրագրի տարբեր կետեր, շեշտելով Հոլանդիայի կառավարության կողմից օգտագործվող «Հայոց ցեղասպանության հարց» արտահայտության վիրավորական բնույթը, հոլանդահայերի նկատմամբ անարդար վերաբերմունքը, հայերի նկատմամբ թուրքական կազմակերպությունների խտրականության դրսևորումը,

հոլանդական քաղաքական և հասարակական կյանքում Անկարայի թաքուն միջամտության դեմ պայքարի անհրաժեշտությունը և բնականաբար Թուրքիայի ներկա իրավիճակը:

Միջազգային

Հեղաշրջման փորձ իրականացրած թուրք գեներալի տնից Բագրատունիների մասին գիրք են հայտնաբերել



Թուրքիայում 2016-ի հուլիսի 15-ի հեղաշրջման փորձի կազմակերպման մեջ մեղադրվող գլխավոր կասկածյալներից գեներալ Էրհան Ջահայի տնից հայտնաբերվել է «Օսմանյան կարությունից մինչև հանրապետություն ծպտյալ հրեաներն ու Բագրատունիները» գիրքը:

Թուրքական Anadolu գործակալության փոխանցմամբ՝ 2016-ի հուլիսի 15-ի հեղաշրջման փորձի գործի շրջանակներում ցամաքային ուժերի հրամանատարությունում տեղի ունեցած դեպքերի գործով 150 զինվորականների դեմ պատրաստված մեղադրական զեկույցը ներկայացվել է դատարան:

Մեղադրական զեկույցում որպես գլխավոր կասկածյալ գեներալ Էրհան Ջահայի տնից հայտնաբերվել է Ահմեդ Աբգյունի հրատարակած «Օսմանյան կարությունից մինչև հանրապետություն ծպտյալ հրեաներն ու Բագրատունիները» գիրքը: Այս գիրքը հայտնաբերվելու փաստը եւս ներառվել է մեղադրական զեկույցում:

Նշենք, որ Բագրատունիների մասին իր հայտնի նգովքում խոսել էր Ֆեթուլլահ Գյուլենը: Դրանից հետո ամբողջ Թուրքիայում ինտերնետով փնտրում էին, թե ովքեր են Բագրատունիները:

Ըստ որոշ թուրք հետազոտողների, Բագրատունիները Թուրքիայում գաղտնի խմբավորում են, ովքեր ճանաչում են միմյանց ու ապրում հատուկ կանոններով: Այսինքն, Թուրքիայի Բագրատունիների արտաքուստ մուսուլման են, սակայն ծպտյալ հայ են: Իսկ որոշ թուրք լրագրողներ շեշտում են, Թուրքիայում Բագրատունիները ազդեցիկ պաշտոններ են զբաղեցնում ու կարևոր դերակատարներ են Թուրքիայի կյանքում:

Սալոնիկում անհայտ անձինք հարձակվել են Թուրքիայի դեսպանատան շենքի վրա

Մի խումբ անհայտ անձինք սպրիլի 23-ի առավոտյան անհայտ անձանց խումբը հարձակվել է Թուրքիայի դեսպանատան վրա հունական Սալոնիկ քաղաքում, տուժածներ չկան, հայտնում է Hurriyet թերթը:

Դեպքը տեղի է ունեցել առավոտյան ժամը 05:30-ին: Թուրքական Doğan գործակալության տվյալներով, փակ դեմքերով անհայտ անձինք շենքը հսկող ոստիկանների վրա նետել են Մոլոտովի երկու կոկտեյլ, դրանցից մեկը այրվել է: Միջադեպի հետևանքով ոչ ոք չի տուժել, նյութական վնաս չի հասցվել: Միջադեպի մյուս հանգամանքները չեն հայտնում:

Ադրբեջանում արգելափակել են ՏՆՏ հեռուստատալիքը Հայոց ցեղասպանության մասին տեսահոլովակների ցուցադրության համար



Ադրբեջանի որոշ մալուխային օպերատորներ դադարեցրել են ռուսական ՏՆՏ ու ՏՆՏ 4 հեռուստատալիքների հեռարձակումը:

Մասնավորապես, ալիքները այլևս հասանելի չեն ամենատարածված մալուխային օպերատորներից մեկի՝ Բաբու-ԿԱՏՎ 1-ի բաժանորդներին: Ընկերությունից haqqin.az-ին հայտնել են, որ ալիքները անջատվել են դրանցով Հայոց ցեղասպանության մասին տեսահոլովակների ցուցադրության պատճառով: Հեռարձակումը կվերականգնվի ապրիլի 25-ից հետո: Իսկ մինչ այդ դրանց փոխարեն թուրքական ալիքներ են հեռարձակվում:

ՏՆՏ-ն ու ՏՆՏ4-ը «Գազպրոմ-մեդիա» հոլդինգի մեջ են մտնում, որը Ռուսաստանի ու Արևելյան Եվրոպայի առաջատար մեդիաընկերությունն է: Երկու հեռուստատալիքներն էլ մտնում են «Գազպրոմ-մեդիա. Ժամանցային հեռուստատեսություն» ենթահոլդինգի մեջ, որի գլխավոր տնօրենը Արթուր Ջանիբեկյանն է:

Թուրքիայում իրենց որդիներին կորցրած մայրերը հարգել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը (Ֆոտո)



Ստամբուլի Գալաթասարայի հրապարակում «Շաբաթ օրվա մայրերը» հավաքվել են ու հարգել 1915-ի Ցեղասպանության ժամանակ զոհ գնացած մտավորականների հիշատակը:

Թուրքական Evrensel-ի փոխանցմամբ՝ ապրիլի 22-ին, Գալաթասարայի հրապարակում հավաքված «Շաբաթ օրվա մայրերը» ձեռքներին պահել են 1915-ին կոտորված հայ մտավորականների ու իրենց կորցրած որդիների նկարները՝

դատապարտելով պետության կողմից իրականացվող կոտորածները:

Նշենք, որ 1995-ի մայիսի 27-ից իրենց հարազատներին անհայտ հանգամանքներում կորցրած մայրերը պարբերաբար շաբաթ օրերը ակցիաներ են իրականացնում Ստամբուլի Գալաթասարայի հրապարակում՝ պահանջելով բացահայտել իրենց որդիներին սպանողների մեղավորներին:



Ջեֆրի Բլարֆիլդ. Հայոց ցեղասպանությունն ինչ-որ առումով Հոլոքոստի փորձն էր



Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին անհրաժեշտ է ավելի լավ հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել եւ ինչպես պետք է կանխել նման դեպքերը: [National Post](#)-ում հրապարակված հոդվածում այս մասին գրել է բրիտանացի հայտնի մարդաբան Ջեֆրի Բլարֆիլդը:

Ցեղասպանության նախաբանը 1894-1896 թվականներին հարյուր հազարավոր հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների սպանությունն էր: Հոդվածի հեղինակն այս իրադարձությունները կոչում է փորձ 1915 թվականի դեպքերից առաջ:

Թուրքական ոչ մի կառավարություն երբեք չի խոստովանել, որ դա որոշակի էթնիկ խմբի ծրագրված ոչնչացում էր, նաև այն, որ հայ որբերին ստիպում էին մահմեդականություն ընդունել:

Մական 2012 թվականին թուրք պատմաբան Թաներ Աքչամը հրապարակեց «Երիտթուրքեր՝ մարդկության դեմ հանցագործություն. Հայոց ցեղասպանությունն ու էթնիկ զտումներն Օսմանյան կայսրությունում» գիրքը: Թուրքական արխիվներն ուսումնասիրելով Աքչամը վերջնականապես ցույց տվեց, որ Հայոց ցեղասպանությունը կանխամտածված, ծրագրված եւ համակարգված էր կառավարության եւ զինված ուժերի կողմից:

«Թուրքիան երբեք ներողություն չի խնդրել: Եվ երբեք Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունները չեն վերականգնվի, մինչև թուրքական կառավարությունը

պաշտոնապես չասի ճշմարտությունն այն մասին, որ հայերը ցեղասպանություն են վերապրել, որը բազմաթիվ առումներով փորձ դարձավ «Ռոբոտստից առաջ»,- գրել է հոդվածի հեղինակը:

Մենք պետք է հիշենք, որ 1939 թվականի օգոստոսի 22-ին, երբ Հիտլերը Լեհաստան ներխուժում է և հրեաների ոչնչացում էր ծրագրում, իր ելույթներից մեկում ասել է. «Ի վերջո, ո՞վ է այսօր խոսում հայերի ջարդերի մասին»:

Փարիզում հարգել են Ֆրանսիայի համար մարտնչած հայ զինվորների հիշատակը

Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Վիգեն Չիթեյանը, ԼՂՀ ներկայացուցիչ Հովհաննես Գեւորգյանը, փարիզյան քաղաքապետարանի աշխատակիցները, Կիպրոսի հանրապետության, Ֆրանսիայի հայկական, ասորական ու քրդական համայնքների ներկայացուցիչները երթ են կազմակերպել Շանգիի ճանապարհի միջև Հաղթական կամար, որտեղ ծաղիկներ են դրել հայ զինվորների հիշատակին, որոնք երկու համաշխարհային պատերազմների ժամանակ մարտնչել են Ֆրանսիայի համար, հայտնում է [Armenews](#)-ը: Միջոցառմանը միացել են նաև զբոսաշրջիկներն ու այն փարիզցիները, որոնք այդ պահին Հաղթական կամարի մոտ էին գտնվում:

Կանադայի Օնտարիո նահանգի վարչապետը հարգել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը



Կանադայի Օնտարիո նահանգի վարչապետ Քեթլին Ուինը հարգել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: «Պատմությունը մեծագույն ուսուցիչ է նրանց համար, ում միտքն ու սիրտը բաց են նրա դասերի համար: Հենց այս պատճառով ենք մենք այսօր հիշում 1,5 մլն հայերին, որոնք զրկվել են ազատությունից, սեփականությունից, մշակութային ժառանգությունից և կյանքից: Հայոց ցեղասպանությունը պատմության դասերը հիշելու մեր պարտավորության մասին համոզիչ հիշեցում է»,- նշված է Ուինի հայտարարության մեջ:

Նա երախտագիտություն է հայտնել հայ համայնքին Օնտարիոյի բազմամշակութային պատմության հաջողություններում ունեցած ավանդի համար: Այն փաստը, որ դուք հիշում եք՝ երախտավորում է, որ սպազա սերունդները Մեծ Եղեռնից դասեր կբաղեն:

Ապրիլի 24-ին մենք հիշում ենք հայ բնակչության ողբերգական կորուստները. Կանադայի վարչապետ



Ապրիլի 24-ին մենք հիշում ենք ավելի քան մեկ դար առաջ հայ բնակչության ողբերգական կորուստները: Այս մասին ասվում է Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոյի հայտարարությունում՝ Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցի կապակցությամբ:

Թրյուդոն հիշեցնում է, որ 2015 թվականին Համայնքների պալատը միաձայն ընդունեց ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր անվանելու առաջարկությունը: «Այդ օրը հարգում ենք նրանց հիշատակը, ովքեր անարդարացիորեն կորցրեցին իրեն կյանքն ու տուժեցին ցեղասպանության ժամանակ: Մենք մեր հարգանքի տուրքն ենք մատուցում նրանց ու նրանց սերունդներին, որոնցից շատերն այժմ բնակվում են Կանադայում», - նշել է նա:

Վարչապետն ընդձել է, որ այդ օրը կանադացիները՝ անկախ դավանանքից կամ էթնիկ պատկանելությունից, միասին հաստատում են իրենց՝ ցանկացած տեսակի ստեղծության ու բռնության առջև անտարբեր չմնալու հավակնությունը: «Հայոց ցեղասպանության հիշատակի օրը ինձ հետ միասին հույս ենք հայտնում, որ մեր ապագայում խաղաղություն ու փոխադաճ հարգանք կլինի», - հայտարարել է Թրյուդոն:

Ժամանակն է, որ ԱՄՆ-ը պաշտոնապես ճանաչի Հայոց ցեղասպանությունը. Ադամ Շիֆ



Մենք չենք կարող աշխարհի բարոյական առաջնորդը մնալ, եթե տարանջատենք և տարբերակենք, թե որ ցեղասպանությունն է հարկավոր ճանաչել: Այս մասին հայտարարել է ԱՄՆ կոնգրեսական Ադամ Շիֆը:

Նրա խոսքով, որպես աշխարհի բարոյական առաջնորդներ, իրենք պարտավորված են պարզորոշ բարձրաձայնել Հայոց ցեղասպանության և ցանկացած այլ ցեղասպանության փաստը, անկախ նրանից, թե այն կատարվել է բարեկամի, թե թշնամու, հզոր թե թույլ իշխանության կողմից:

«Մենք չենք կարող հետեւողական մնալ, եթե հայտարարենք, որ Դարձուրի ցեղասպանությունը ճանաչելու ենք, որովհետև Սուդանը թույլ է, իսկ Հայոց ցեղասպանությունը չենք ճանաչելու, որովհետև Թուրքիան ուժեղ է: Մենք տեսնում ենք, թե ինչպես է Թուրքիան դեպի ավտորիտար

համակարգ պանում, դեպի մի համակարգ, որը շատ նման է Պուտինի ստեղծած համակարգին: Եվ չկա որեւէ պատճառ, որեւէ բարոյական պատճառ, սակայն նաեւ չկա որեւէ ռազմավարական պատճառ, որպէսզի մենք Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի ջրաղացի վրա ջուր լցնենք: Ժամանակն է, որ Միացյալ Նահանգները բարձրաձայն, պարզորոշ, հստակ ու միանշանակորեն ճանաչի Հայոց ցեղասպանությունը», - ընդգծել է նա:

Կոնգրեսականը նկատել է, որ այսօր աշխարհում հայերի համար վտանգավոր ժամանակներ են. «Ժամանակներ, երբ Միքիայի կամ Իրաքի տարածքներում հայերը ոչնչացման վտանգի առջեւ են, ժամանակներ, երբ տասնյակ հազարավոր փախստականներ, սիրիահայ փախստականներ, ապաստան են գտել Հայաստանում»:

Ես հանգիստ չեմ մնա, քանի դեռ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը. Բրեդ Շերման



Մենք պետք է ճանաչենք 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը նաեւ թուրք ժողովրդին օգնելու համար: Այս մասին հայտարարել է ԱՄՆ կոնգրեսական Բրեդ Շերմանը:

Նրա խոսքով, Գերմանիան կարողացավ զիտակցել սեփական պատմությունը եւ Գերմանիան դարձավ բարգավաճ, հզոր եւ ժողովրդավարական մի պետություն, որտեղ կցանկանային սարել բազմաթիվ մարդիկ. «Թուրքիան շարունակում է հերքել Հայոց ցեղասպանությունը, արդյունքում նրանք ծայրահեղական, ավտորիտար եւ էրդողանիստական պետության ճանապարհին են:

Ես հանգիստ չեմ մնա, քանի դեռ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, որովհետեւ Յեղասպանության հերքումը ցեղասպանության վերջին քայլն է»:

Կոնգրեսականի խոսքով, ազգը ոչնչացնելուց հետո դու ոչնչացնում ես այդ հանցանքի մասին հիշողությունը, սակայն «Յեղասպանության հերքումը հաջորդ ցեղասպանության առաջին քայլն է եւ կարիք չկա հիշեցնելու, թե ինչպես էր Հիտլերը համոզել իր ենթականերին, որ ողջակիզման պատասխանատվությունից իրենք կարող են խուսափել, որովհետեւ Օսմանյան կայսրությանը հաջողվել էր խուսափել ցեղասպանության համար պատասխանատվությունից»:

Բունոս Այրենս ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի օր է հայտարարել



Բունոս Այրենսի քաղաքապետարանն ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի օր է հայտարարել:

Որոշումն ընդունվել է ապրիլի 20-ի նիստի ընթացքում: Prensa Armenia-ի փոխանցմամբ՝ օրվա կարգախոսն է «Հիշողություն, ճշմարտություն, արդարություն եւ հայրենադարձություն»:

Բանաձեւը, որի հեղինակները Ժոզե Կամպանյոյին եւ Կառլոս Թամադան են, ապրիլի 24-ին ներկայացվելու է Թուրքիայի դեսպանի նստավայրի մոտ հայ համայնքի կազմակերպած ակցիայից հետո:

Կանադացի պատգամավորը կոչ է արել վերջ տալ Հայոց ցեղասպանության ժխտմանը



Կանադայի խորհրդարանի պատգամավոր Բրայան Մեյը հայտնել է, որ Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցի նախօրեին կարելու է դադարեցնել ցեղասպանությունների ժխտումը:

Ելույթ ունենալով Կանադայի խորհրդարանում՝ պատգամավորը հայտնել է, որ բոլոր ազգերն ու ժողովուրդները պետք է ցեղասպանությունը ճանաչեն որպես պատմական, այլ ոչ թե քաղաքական հարց: «Չոհերի հիշատակը այսօր պղծվում է այդ իրադարձությունները ժխտողների տգիտությամբ: Խորհրդածելով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության, Ուկրաինայում, Ռուանդայում, Բոսնիայում տեղի ունեցած ցեղասպանությունների, նաեւ եզդիների ցեղասպանության ու Հոլոքոսթի մասին՝ մենք պետք է հանուն մարդկության պարտավորություն ստանձնենք, երաշխավորելով, որ ցեղասպանություններ այլեւ չեն կրկնվի», - ասել է նա:

Կանադայի Հայ դատի հանձնախումբը շնորհակալություն է հայտնել պատգամավորին՝ այս կարևոր հարցի շուրջ անփոփոխ աջակցության ու սկզբունքային դիրքորոշման համար:

Մշակույթ

Ակնարկ Հայ ժողովրդի հայրենադարձությանը

19-20-րդ դարերում

Գր. Էդիկ Բաղդասարյան

Ինչու հայերը ցանկացան թոթափել

պարսկական խանական տիրապետությունը

Պարսկական տիրապետության վերջին տարիներին հայ ազգաբնակչության վիճակը գնալով ավելի էր ծանրանում: Հայ ժողովրդի կիռարվող ճնշումները կարելի է հետեւյալ կերպով դասակարգել.

ա - Ազգային-կրոնական հալածանքներ: Խաչատուր Աբովյանը այսպես է վկայում. « Մարդ ո՞ր հողը տա գլխին. ինչ ուզում են, էն են անում: Դատաստան չկա, իրավունք չկա.... Աղչիկն ասես, քաշում են, տղեն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում (մուսուլմանացնում,- Է.Բ.), հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նախատում: Ո՛չ տունն է իրանը, ո՛չ մալը, ոչ ապրանքը, ոչ ջանը, ո՛չ օղուշաղը»¹:


Նույնիսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը եւ նրա կենտրոն էջմիածինը, ենթարկվում էին անլուր հալածանքների ու բռնությունների: Բանը երբեմն այնտեղ էր հասնում, որ նույնիսկ հոգեւոր պաշտոնյաներին էին փորձում կրոնափոխ անել²:

բ - Կաշառակերություն, թալան: Սարգարական կառավարությունը օգտագործում էր ամեն մի առիթ, որպեսզի կաշառքներ կամավոր «նվիրատվություններ» կորզի իր հպատակներից: Նյութական հարստահարությունների եւ կեղեքումների, անհաշիվ հարկերի ճնշման տակ սնանկանում էր ժողովուրդը³:

1810 թ. երբ Փամբակից փախած Նաղի խանի տունը հրդեհվեց մի մարդու կողմից, որը ընտանեկան պատիվը արատավորել էր այդ նույն Նաղի խանը, սարդարի եղբայր՝ Հասան խանը այդ առիթը օգտագործեց՝ կրկին անգամ կողոպտելու էջմիածնի վանքը: Նաղի խանի եղբայր Հասան բեկը իր մարդկանցով ներխուժում է էջմիածին եւ սկսում ծեծել ու ջարդել պատահած մարդկանց: Զինվորներից մեկի հարվածից վախճանվում է զառանյալ Ստեփանոս եպիսկոպոսը: Քսան հրացանավոր պարսիկներ դաժանորեն ծեծում են Ներսիսյան Հովհաննես եպիսկոպոսին եւ Մայր տաճարից գետնաքարը տանում մինչեւ Գայանեի վանքը: Տեղապահ Բարսեղ եպիսկոպոսին այնպես են հարվածում, որ երկու ժամ ընկած է մնում սառույցի վրա: Մի քանի օր հետո ձերբակալվում են Ներսես Աշտարակեցին, Ղուկաս վարդապետը, Ավետիսը եւ ուրիշներ: Հասան խանը սպառնում է նրանց հրանոթագարկ անել: Էջմիածնի վանքից 450 թուման դրամ կորզելուց հետո միայն հանգիստ են թողնում միաբանությունը⁴:

Այդպիսի դեպքերի մասին մեզ են մնացել բազմաթիվ վկայություններ:

գ - Անօրինություն, անբարոյականություն: Երկրում բացակայում էր օրինական, ժողովրդական մի վարչակազմ, անառակ եւ անբարոյական տիրողներ էին իշխում ժողովրդին՝ որոնցից էր Ֆաթհ Ալի շահը, որը միայն իր հարեմի, հարյուրավոր կանանց եւ տափամուլական կյանքի մասին էր մտածում: Տառապում էր Իրանի ողջ ժողովուրդը՝ ընդհարնապես, եւ հայերն ու մյուս քրիստոնյաները կրկնակիորեն՝ մասնավորապես. հայի մարդկային եւ ազգային պատիվն ու արժանապատվությունը արատավորվում իր իսկ հայրենի հողի վրա, իր հայրենիի տան մեջ: Քաղաքակիրթ հարեաններ ունենալը ամենամեծ բարիքներից է որեւէ համայնքի եւ ժողովրդի համար:



Երեւան 1673-ին, ֆրանսացի ուղեւոր Ժան Շարտէնի գծագրութեան համաձայն

դ - Հայ ժողովուրդը երբ զրկվեց իր ազգային պետականությունից, միշտ երազեց եւ ապա ջանքեր գործադրեց վերականգնելու իր ազգային իղձն ու երազանքը, որոնց իրագործման համար ոչ մի լուսավոր ապագա չէր տեսնում պարսկական ավատատիրական - թալանչիական փշացած տիրապետության պայմաններում, ուստի իր հույսերը կապեց օտար քրիստոնյա տերությունների օգնության հետ, ինչպես արդեն անդրադարձել ենք՝ նախ դիմեց եվրոպական երկրներին, նրանցից հուսահատվելով դիմեց Ռուսաստանին եւ իր սեփական ուժերին, որոնց շնորհիվ կարողացավ ավելի պակաս քան մեկ դարա ժամանակամիջոցում (1828 - 1918) իրականացնել իր երազանքների մի մասը:

Ե-Դարերի ընթացքում պարսկական տիրակալների կողմից իրականացվող շարունակական գերեվարությունները, բռնագաղթը, սեփական հողից ու տնից զրկվելը, որի ընթացքում հազարավոր անմեղ մարդիկ, կանաչք ու երեքաներ ու ծերունիներ կորցնում էին իրենց կյանքը, կենդանի մնացողների մի մասն էլ բռի կրոնաթող էին լինում եւ կորցնում իրենց ազգային-կրոնական ինքնությունը, նաեւ որի ընթացքում բռնաբարվում եւ իւրացվում էին հայ աղջիկներն ու կանաչք նաեւ մանուկները, քանի որ թշնամու գազանաբարո տափամուլությանն ու քրիստոնյայի թալանմանը չկար ոչ մի սահման: Իրանական վայրի ցեղերի այդպիսի վերաբերմունքը դեռեւս շարունակվեց մինչեւ 20-րդ դարի կեսերը հայ գյուղացիների նկատմամբ: «Հայ աղջիկ փախցնելու» անզուսպ ցանկությունները շարունակվեց շատ երկար, որից նմուշներ են ապրում մինչ օրս:

(Շար. 5)

¹ - Խաչատուր Աբովյան, «Վերք Հյաստանի», Երեւան 1959, էջ 38:

² - Հայ ժողովրդի Պատմություն, Հ. 5, էջ 56:

³ - Մ. Թաղիադյանց, Ճանապարհորդություն ի Հայս, Հ. 1, էջ 227:

⁴ - Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 17, վավ. 46: Հայ ժողովրդի Պատմություն, Հ. 5, էջ 58:

Հայկական կոտորածների պատմությունից

(Դրվագներ Հայոց Մեծ եղեռնին նվիրված ընդարձակ հոդվածից)

Դր. Էդիկ Բաղդասարյան
Տորոնտոյի Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոնի տնօրեն,
«Հույս» ամսագրի և «Ապագա» հանդեսի խմբագիր

Հայկական տարրի ոչնչացումը հատկապես սկսվել է 15-րդ դարից, սակայն, երբ հայ ազատագրական պայքարը նոր կազմակերպված հիմքերի վրա դրվեց, եւ հայ ժողովուրդը ազգային զարթոնք ապրեց՝ հայկական կոտորածները կազմակերպված եւ ծրագրված կերպով նոր թափ ստացան հատկապես 19-դարի երկրորդ կեսից:

Ի նկատի ունենալով մեր խոսքի ժամանակի սահմանները, ստորեւ տալիս ենք հայկական կոտորածների նորագույն շրջանի ժամանակագրությունն ու կոտորածների թիվը.

Ութվական	վայրը	Քանակը (մարդ)	
1	1860	Լիբանան	12,000
2	1876	Բուլգարիա	14,000
3	1877	Բայազետ	1,400
4	1879	Ալաշկերտ	1,250
5	1881	Ալեքսանդրիա	2,000
6	1892	Ներքին Թուրքիա	3,500
7	1894	Սասուն	12,000
8	1895	Արեւմտահայաստան	300,000
9	1846	Կոստանդնուպոլիս	9,570
10	1903	Մակեդոնիա	14,667
11	1904	Սասուն	5,640
12	1909	Կիլիկիա	30,000
13	1915	Թուրքիա և Արեւմտահայաստան	1,500,000
14	1918	Կարս-Արդանան	50,000
15	1918	Բաքու եւ շրջակայք	30,000
16	1919	Կիլիկիա եւ շրջակայք	60,000
17	1921	Հաճըն	20,000
18	1922	Զմյուռնիա	10,000
Ընդամենը (1860 թ.- 1922թ.)		2,284,027 ⁵	

Արեւմտահայուստանի ֆիզիկական բնաջնջման իր հրեշավոր ծրագրերը թուրքական բռնակալությունը մշակել է դեռեւս 19-րդ դարի վերջերին: Սակայն այդ քաղաքականությունն ավելի լայն չափերով իրագործվեց երիտթուրքերի կառավարման տարիներին:

Դեռ 1914 թ. աշնանը եւ 1915 թ. սկզբներին թուրքական իշխանություններն սկսեցին հատվածաբար ոչնչացնել բանակ զորակոչված հայերին, ապա նաեւ ճանապարհների վրա աշխատեցնելու պատրվակով զորահավաքի ենթարկված 15-20 եւ 45-60 տարեկան տղամարդկանց: Օգտագործելով պատերազմական իրադրությունը, իթիհատականները 1915 թ. սկզբներին կայացած իրենց կուսակցության կենտրոնի գաղտնի նիստում որոշեցին արեւմտահայուստան բնաջնջման եւ տեղահանության կոնկրետ եղանակները:

Թալեաթի նախագահութեամբ գումարված գաղտնի նիստում, որին մասնակցում էին էնվերը, Նազըմը, Բեհանգըրին Շաքիրը եւ ուրիշներ, հանդես գալով որպէս հիմնական զեկուցող

կոմիտեի քարտուղար Նազըմը կոչ էր անում չբավարարվել Ադանայի կոտորածի նման մասնակի ջարդերով. «Պետք է հայ ազգը արմատախիլ լինի, մեր հողի վրա մի անհատ անգամ չմնա, հայ անունը մոռացվի: Հիմա պատերազմի մեջ ենք, սրանից հարմար առիթ չի գտնվի, մեծ պետությունների միջամտությունը եւ թերթերի բողոքի ձայնը նկատելի իսկ չի կարող լինի, լինելու պարագային խնդիրը կատարված մի իրողություն կդառնա եւ կփակվի, այս անգամվա գործողությունը բնաջնջումի մի գործողություն պիտի լինի, մի հայ անհատ իսկ չմնալու պայմանով բնաջնջումը անհրաժեշտ է»:

Այսպէս, ապրիլի 15-ին տեղական իշխանություններին թալեաթի, էնվերի, եւ Նազըմի ստորագրությամբ գաղտնի հրաման ուղարկվեց, որտեղ ասված էր, թէ օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, անհրաժեշտ է վերջնականապէս բնաջնջել հայերին՝ նրանց քշելով դեպի Արաբիայի անապատները:

Դահլիճները առաջին հերթին հաշվեհարդար տեսան հայ ականավոր գործիչների ու մտավորականների, այդ թվում մեջլիսի հայ պատգամավորների հետ: Միայն Կ. Պոլսում ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերն ոստիկանությունը ձերբակալեց 235 անվանի հայ մտավորականներ: Շուտով ձերբակալվածների թիվը հասավ շուրջ 800-ի, որոնք քշվեցին դեպի Անատոլիայի խորքերը եւ գազանաբար սպանվեցին աքսորի ճանապարհին: Կ. Պոլսի նահատակված հայ մտավորականների թվում էին Գ. Զորաբալը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռ. Զարգարանը, Ռ. Սեւակը, Հովհ. Թլկատիցին, Հրանդը, Նրուխանը եւ շատ շատ ուրիշներ: Հանձարեղ Կոմիտասը պատահաբար փրկվելով մահից եւ ականատես լինելով հայ ժողովրդի մեծագույն այդ ողբերգությունը՝ կորցրեց բանականությունը:

Երիտթուրքերի կառավարությունը 1915 թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի սուլթան Բայազետի հրապարակում կախաղան բարձրացրեց հնչակահան կուսակցության 20 ղեկավարների (Փարամազ, դոկտ. Պենե, Վանիկ, Ա.Ալքալաչյան եւ այլն):

Թալեաթի ստորագրությամբ մի գաղտնի կարգադրություն է հղվում վիլայեթների իշխանություններին, ուր ասվում էր, որ բնաջնջել անհրաժեշտ է Արեւմտահայաստանի եւ Կիլիկիայի ողջ հայ ազգաբնակչությունը. «Կառավարությունը իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը եւ հրամայում է շինայել անգամ օրորոցի երեխաներին»:

Տեղական իշխանությունները մեծագույն ճշտությամբ էին կատարում թալեաթի բոլոր կարգադրությունները: Այսպէս 1915 թ. ապրիլ-մայիսին տեղահան արվեցին Կիլիկիայի հայերը, հունիս-հուլիսին՝ Կարինի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի եւ Սվազի, օգոստոս-սեպտեմբերին՝ Անկարայի, Ադաբազարի, Բրուսայի, Զեբել Մուսայի, Ուրֆայի եւ Այնթապի հայերը:

Հայերի աքսորը դեպի Դելլի-Էզ-զոր (աղավաղված՝ Տեր Զոր) քաղաքի շրջակա տոթակեզ անապատը եւ գանգվածային ջարդը միեւնույն եղանակով եւ միաժամանակ իրականացվեց թուրքիայի ավելի քան 50 վայրերում:

Աքսորից առաջ տղամարդկանց բաժանում էին ընտանիքներից ու ոչնչացնում: Գեղեցիկ կանանց ու աղջիկներին բռնի կերպով առանձնացնում էին՝ մեծահարուստ թուրքերի հարամներն ուղարկելու համար: Ապա սովահար հոծ գանգվածներին քշում էին Անատոլիայի լեռնաբնջքներով, կիզիչ արեւի ճառագայթների տակ՝ դեպի միջագետքի անապատները: Հազարավոր հայեր ճանապարհին մահանում էին սովից, ձարավից, ուժասպառությունից: Նրանք՝ ուլթեր այլեւ անկարող էին առաջ շարժվել, անմիջապէս սվինահարվում էին:

Այս աքսորյալներից շատ քերն էին տեղ հասնում. օրինակ՝ Սեբաստիայից եւ Խարբերդից աքսորված 18,000 հայերից

⁵ - New York Times, Աշխարհի ահաբեկչությունները եւ կոտորածները: էջ 396)

աքսորավայր են հասել 150 կին եւ երեխա. Հայեպից Բես-յուլ-Այն եւ Մերսենի ճանապարհով աքսորված 20,000 հայերից կենդանի մնացին 5,000 հոգի: Կարինի վիլայեթի 215,000 հայ ազգաբնակչությունից կենդանի մնացին ընդամենը 2000, իսկ Կարին քաղաքի 18,000 հայերից՝ 120 մարդ:

Հայկական կոտորածներն ոչ միայն տեղի էին ունենում հայկական վիլայեթներում ու Թրակիայում, այլ նաեւ ուրիշ տեղերում բնակվող հայերի նկատմամբ:

Հայերին գլխովին չաքսորեցին միայն երկու քաղաքներից՝ Կ. Պոլսից ու Զմյուռնիայից:

Այսպիսով, 1915-1918 թթ ընթացքում երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված հալածիչ գործողությունների հետեւանքով մոտ երկու միլիոն հայեր աքսորվեցին, որոնցից մեկ ու կես միլիոնից ավելին սպանվեց կամ զոհ գնաց սովին ու համաճարակին Միջագետքի անապատներում: Բռնի թուրքացման ենթարկվեցին շուրջ 200,000 հայեր, գերազանցապես կանայք ու երեխաներ:

Երիտթուրքերը գազանային եղանակով «լուծեցին» հայկական հարցը: Մեծ եղեռնից հետո արյունարբու Թալեաթ փաշան պաշտոնապես հայտարարեց՝ «չկա այլեւս հայկական հարց, քանի որ չկան նաեւ հայեր»:

1916 թ. Լոնդոնում հայկական հարցի կապակցությամբ տեղի ունեցած բանակցություններին հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի առաջարկը՝ կոտորածներից ազատված հայ տարագիրներից Արեւելյան լեզեոն ստեղծելու մասին, հավանություն գտավ Ֆրանսիայի (Ժորժ Պիկո) եւ Անգլիայի (Մաչքըլ Սաչքս) կողմից:

1916 թ. նոյեմբերի 28-ին Ֆրանսիայի կառավարությունը որոշեց հայ տարագիրներից կազմավորել այդ լեզեոնը: Այդ լեզեոնի ընդհանուր թիվը 1918 թ. մայիսին կազմում էր 5,662 զինվոր, որից 400-ն էին սիրիացիներ, մնացածը հայեր էին: Նրանք առաջին անգամ պատերազմական գործողություններին մասնակցեցին միայն 1918 թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինի ճակատում:

Հնչակյանների, ռամկավարների եւ դաշնակցականների ղեկավարները հուսադրվելով իմպերիալիստական Ֆրանսիայի պետական գործիչների խաբեբա ճառերից, 1920 թ. օգոստոսի 3-ին Ադանայի մոտակայքում, չուրաքանչյուրը առանձին-առանձին «Միջագետքի հանրապետություն» հռչակեցին, իսկ Ադանայում օգոստոսի 4-ին Միհրան Տամատյանի նախագահած Ազգային գերագույն խորհուրդը «Ֆրանսիական հովանավորության տակ ինքնավար ազատատան հռչակեց»: Այդ հանրապետություններից երկուսը առաջին իսկ օրը, իսկ երրորդը՝ երրորդ օրը վերացվեցին Ֆրանսիական զորամասերի կողմից:

Սկսված անգլո-ֆրանսիական հակասությունների պայմաններում Ֆրանսիան հակվեց դեպի Թուրքիան: 1921թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում Ֆրանսիայի եւ Քեմալական Թուրքիայի միջեւ կնքվեց պայմանագիր, որով Ֆրանսիան իր զորքերը հեռացրեց Կիլիկիայից: Այսպիսով՝ ինչ որ իթթիահատականներին չհաջողվեց անել Մեծ եղեռնի օրերին, հինգ տարուց հետո հաջողվեց կատարել քեմալականներին: Այդ երկրորդ ցեղասպանությունը, որին զոհ գնացին 30,000-ից ավելի կիլիկիահայեր, այս անգամ կատարվեց մեծ պետությունների թողտվությամբ: Կիլիկիան եւս դատարկվեց հայությունից:

Մինչեւ տողերիս գրելու պահը, մեր այսպես կոչված «ազգային կուսակցություններն» ու նրանց հարող անգիրտակից որոշ ժողովրդական խավեր թե Հայաստանում եւ թե Սփյուռքում մեծ պետությունների փեշերից աղերսում են Հայ դատի ու հայեց ցեղասպանության ճանաչումը, որը դարձել է միայն եկամտոտի միջոց նրանց համար, շարաշահելով անգիրտակից ժողովրդի ազգային զգացմունքները:

Մեծ եղեռնի դրդապատճառներն ու պատասխանատուները

Մեծ եղեռնի առաջացման գլխավոր պատճառները կարելի է ամփոփել հետեւյալ կերպով.

1-Թուրքական ազգի ձեւավորման պրոցեսի անբաժանելի մասն էր կազմում հայերի ուծացումն ու ոչնչացումը:

2-Նվրոպայի իմպերիալիստական պետությունների համար առիթ էր ծառայում «հայկական հարցն» ու հայերի գոյությունը թուրքական իշխանության տերիտորիայում, որով նրանք կարողանում էին միջամտել թուրք պետության գործերին: Կոտորածների ծրագրի շնորհիվ միանգամայն վերանում էր այդ հարցը:

3-Հայկական գլխավոր կոտորածները ծրագրվեցին մասոնական-սիոնիստական կազմակերպությունների միջոցով, որպեսզի հայերի ոչնչացումով հրյաների ամենամեծ տնտեսական մրցակիցը կանգ առնի գոյություն ունեանալ: Հայտնի է, որ թե օսմանական ժամանակաշրջանի, եւ թե իթթիհատական եւ քեմալական ղեկավարները կամ ծագումով մասոնական հրյաներ էին, եւ կամ թուրք մասոնականներ (օրինակ՝ Թալեաթ փաշան, Քեմալ Աթաթուրքը, փրինս Ահմադ քեմալ էդդին էֆենդի եւ Նուրեդդին էֆենդի՝ Սուլթան Աբդուլ Մաջիդի զավակները, Մուսթաֆա Ռաշիդ փաշա, օսմանական վարչապետ եւ այլն):

4-Հայերը եւ հայ ազատագրական պայքարը մեծ խոչնդոտ էին համարվում պանթուրքական զավթողական ծրագրերի իրականացման դեմ, որի իսկական հրահրողներն էին Գերմանիան, Անգլիան եւ Ֆրանսիան (իհարկե տարբեր ժամանակաշրջաններում). Որոնք Արեւելյան Հարցի ժամանակակից տերերն ու հրահրողներն էին: Հայկական ազատագրական պայքարն ու արեւմտահայերը առհասակ ուսուսան հակում ունեին, որը չէր համընկնում արեւմտյան երկրների շահերին: Հայերի այդ հավատարմության դիմաց թե ցարական Ռուսաստանը եւ թե բոլշևեկյան պետությունը դրժեց իր ուխտը, նախընտրեց պաշտպանել ուրբերին ու ազերիներին: Ռուսները ավելի քիչ հանցավոր չեն եվրոպական իմպերիալիստական-մասոն-սիոնիստական Անգլիայից, Ֆրանսիայից ու նրանց մոլորակներից:

5-Օսմանական նախկին երկրների անկախացումը (Բուլգարիա, Հունաստան եւ բալկաններ) այդ պետությանը պարտադրեց ուշադրություն դարձնել արեւելյան սահմաններին եւ ճնշել հայկական շարժումները:

6-Հայկական անհեռատես եւ արկածախնդրական զինյալ գործողությունները: Քանի որ ժողովուրդը իր հողի վրա էր ապրում, հայկական զինյալ Ֆիդայական խմբերը Կովկասից անցնում էին Պարսկաստան ապա Արեւմտյան Հայաստան, կատարում ակաբեկչական գործողություն, ապա հեռանում, իսկ դրանց հետեւանքով տասնյակ հազարավոր անպաշտպան խաղաղ հայ բնակչություն սրի էր քաշվում մուսուլման թուրքերի ու քուրդերի ձեռքով: Ցավոք մինչ օրս էլ հայկական քաղաքական խմբերը պատմությունից դաս չեն վերցրել: Հայոց թափված արյունը դարձել է նրանց ու գաղտնի կազմակերպությունների ու «մարդասեր» արեւմուտքի տնտեսական ու քաղաքական շահարկումների միջոց:

Հայկական կոտորածների իսկական պատասխանատուները հետեւյալներն են.

1-Համաշխարհային գաղտնի կազմակերպությունները, իմա մասոնական-սիոնիստական օթյակներն ու խմբերը, որոնց ճիրանների մեջ են գտնվում իմպերիալիստական պետությունները (Արեւելյան Հարցի տերերը):

2-Գերմանական, Ավստրո-հունգարական, Անգլիական, Ֆրանսիական եւ Յարական պետությունները:

3-Օսմանական, իթթիհատական եւ քեմալական պետությունները:

4-Թուրքիայի թուրքերը, քուրդերն ու ազերի թաթարները:

1919 թ. մարտի 8-ին սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինի (1918-1922) հատուկ հրամանով, երիտթուրքական կուսակցական պարագլուխներն ու նախարարները հանձնվում են Կ. Պոլսի ռազմական արտակարգ ատյանի քննությանը: Այս դատաքննությունների ընթացքում հեռակա կարգով մեղադրվում են 10 իսկ դատավարությունը ներկա 20 կուսակցական եւ պետական բարձրաստիճան գործիչներ:

Հեռակա կարգով դատի տրված մեղադրյալներն էին.

1-Թալեաթ փաշա - ներքին գործ. նախարար, մեծ վեզիր (1917-1918):

2-Հնվեր փաշա - ռազմական նախարար

3-Ջեմալ փաշա- ծովային:

4-Բեհհեդդին Շաքիր Բեյ- երիտ. թուրք. կուսակցության կլ անդամ «Թեշքիլաթ-ը Մախսուսե»-ի նախագահ:

5-Դոկտ. Նազըմ Բեյ- կուսակց. կլ անդամ, հանրակրթական նախարար:

6-Ջավիդ բեյ- Ֆինանսների նախարար:

7-Սուլեյման էլբիստանի բեյ- հողագործության, առևտրի նախարար (1915-1917):

8-Մուստաֆա Շերեֆ բեյ- հողագործության եւ առևտրի նախարար:

9-Ոսկան էֆենդի- փոստի եւ հեռագրատան նախարար (1914-1917):

10-Դոկտ. Ռուզուհի էֆենդի- կուսակց. կլ անդամ:

11-Ազիզ էֆենդի-հասարակական անվտանգութհան նախարար:

Հայկական վրեժխնդրության պատմությունից

Հայոց մեծ եղեռնի թուրք կազմակերպիչները գերծ շմնացին հայերի վրեժխնդրությունից եւ հայկական գնդակների թիրախը դարձան:

Դաշնակցության «Նեմեսիս» գործողության եւ հայ բոլշևիկ ազգայինների նպատակն էր պատժել 1915 թ. հայերի ցեղասպանությունը կազմակերպող եւ իրականացնող երիտթուրք («Միություն եւ առաջադիմություն» կուսակցություն) պարագլուխներին, 1918 թ. Բաքվի հայերի ջարդի կազմակերպիչներին եւ թուրքերի հետ համագործակցած հայ դավաճաններին:

«Նեմեսիս» գործողությունը կազմակերպել է Հայ հեղափոխական դաշնակցությունը: «Նեմեսիս» կամ «Նեմեզիս» (հուն. Νέμεσις) է կոչվել հին հունական վրեժխնդրության աստվածուհու անունով: Գործողության կատարման որոշումը կայացվել է 1919 թ. Երևանում Հայ հեղափոխական դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովում: Նշվել է ցեղասպանության հանցագործների 650 անուն, որոնցից առանձնացվել են 41 գլխավոր հանցագործները:

Այս որոշումն ընդունվեց Նաթալու եւ Գրիգոր Մերջանովի քրտնաջան ու համառ աշխատանքի շնորհիվ քանզի հենց սկզբից էլ դրան դեմ էին ՀՅԴ ամենաազդեցիկ մի շարք գործիչներ որոնց թվում էին հրեյի փեսաներ Ս. Վրացյանը, Ռ. Տեր - Մինասյանը, Ռ. Դարբինյանն ու Ա. Զամալյանը :

Ահա՛ նրանց պատճառաբանությունը . «Հայկական նորաստեղծ հանրապետությունը կարիքն ունի Թուրքիո բարեկամութեան»: Ինչեւէ, չնայած հոր խոչնդոտներին, կյանքի է կոչվում « Նեմեսիս» գործողությունը,որի անմիջական ղեկավարը, ոգին ու կազմակերպիչը հանդիսացավ Շահան Նաթալին :

«Նեմեսիս» գործողությունն իրականացնելու համար ստեղծվել են պատասխանատու մարմին (ղեկավար՝ ԱՄՄ-ում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Արմեն Գարո) եւ հատուկ հիմնադրամ (ղեկավար՝ Շահան Սաթվաղյան):

Գործողության օպերատիվ ղեկավարությունն ու նյութական ապահովումն իրագործելու էին Շահան Նաթալին (Հակոբ Տեր - Հակոբյան) եւ Գրիգոր Մերջանովը: Հանցագործներին հայտնաբերելու գործը ղեկավարելու էր Հրաչ Փափազյանը, որը, որպես թուրք ուսանող, կարողացել էր թափանցել երիտթուրք վտարանդիական բարձր շրջանակներ:

«Նեմեսիս» գործողությունը նախապատրաստվել է մանրամասն: Գործողության կազմակերպչական կենտրոններն էին Կ. Պոլսի «Ճակատամարտ» եւ Բոստոնի «Դրոշակ» թերթերի խմբագրատները: Վրիժառուների խմբերը՝ յուրաքանչյուրում 3-5 մարդ, հետապնդելու էին կոնկրետ հանցագործին եւ հարմար պահին դատավճիռն ի կատար էին ածելու:

«Նեմեսիսը» կազմակերպվեց հաջողությամբ:

1-1919 թ. Թիֆլիսի Երևանյան հրապարակում Արամ Երկանյանը գնդակահարեց մուսավաթական Ղասիմբեկովին:

2-Հնվեր փաշան (Ստամբուլ, նոյեմբերի 22, 1881 թ.- Դուռնբե (Տաջիկստան), օգոստոս 4, 1922 թ.) 1921 թ. անցել է Միջին Ասիա, որտեղ գլխավորել է բասմալների գործողությունները: Սպանվել է խորհրդային զորքերի հետ բախումներից մեկի ժամանակ 40-ամյա տարիքում՝ արցախցի ռազմիկ Հակոբ Մելքունյանի կողմից: Նախկինում ենթադրվում էր, որ 1922 թ. Թաշքենդում սպանվել էր հայազգի Աղաբեգովի ձեռքով:

3-Ջեմալ փաշան (1872-1922 Օսմանյան

Թուրքիայի Պաղեստինյան Ճակատի Հրամանատար, նաեւ երիտասարդ Թուրքեր կազմակերպության ղեկավարներից) 1922 թ. հուլիսի 25-ին Թիֆլիսում խոտորչուրցի երիտասարդներ Պետրոս Տ. Պողոսյանի եւ Արտաշես Գեւորգյանի միջոցով: Այդ գործողությանը մասնակցել են նաեւ Ստեփան Ծաղիկյանը եւ Զարեհ Մելիք-Շահնազարյանը:

4-1920 թ. Թիֆլիսում 20-ամյա Արամ Երկանյանը սպանեց Ադրբեջանի մուսավաթական կառավարության ղեկավար Խան Խոյսկուն՝ 1918 թ. սեպտեմբերին Բաքվի 30 եւ 1920 թ. մարտի 23-ին Շուշիի 35 հազար հայերի ջարդի գլխավոր կազմակերպչին, մուսավաթական Սաֆարովին, իսկ մյուս դահիճը՝ Խաս Մահմեդովը, վիրավորվեց:

5-Աբբաս Բեգովը 1920 թ. սպանվեց Արամ Երկանյանի ձեռքով:

6-Թալեաթ փաշան 1921 թ. մարտի 15-ին Բերլինում Սողոմոն Թեհլիրյանի ձեռքով:

8- 1921 թ. դեկտեմբերի 5-ին Արշավիր Շիրակյանը Հոռոմոն սպանեց երիտթուրքական կառավարության առաջին կաբինետի ղեկավար Սալիզ Հալիմին՝ կոտորածի ծրագիրը հաստատողին:

9-1922 թ. ապրիլի 17-ին Ա. Շիրակյանն ու Ա. Երկանյանը Բեռլինում գնդակահարեցին Տրապիզոնի նախկին նահանգապետ Ջեմալ Ազմիին եւ «Թեշքիլաթը մախսուսե» կազմակերպության հիմնադիր Բեհա-էդդին Շաքիրին. տիկին Թալեաթի աչքի առաջ (սպանվել է նաեւ Շաքիրի թիկնապահներից մեկը):

10-1921 թ. հուլիսի 19-ին Կ. Պոլսում «Ճակատամարտ» թերթի խմբագրատան առաջ, 33-ամյա Մ. Թուլաքյանը

գնդակահարեց Պենսիլվանիայի Նիոնի շրջանի Նիոնի գնդակահարների խումբի անդամ Նաթանիելը 1915 թ. հունիսի 27-ին:

Գավառների սպանությունը

1920 թվականին «Նեմեսիս» գործողության շրջանակներում, դատապարտվել է գնդակահարվել են մի շարք հայ գավառականներ:

1920 թվականին Սողոմոն Թեհլերյանը սպանել է Կոստանդնուպոլսում Օսմանյան կայսրության գաղտնի ոստիկանության քաղաքական ղեկավար Միրտիչ Հարությունյանին:

1920 թվականի մարտի 27-ին Արշավիր Շիրակյանը գնդակահարել է Կոստանդնուպոլսում Վահե Իհասանին (Յասյան): Իհասանը թուրքերի համար կազմել էր Կոստանդնուպոլսի հայ մտավորականների ցուցակ, ովքեր սպանվեցին 1915 թվականին:

1914 թվականին Հնչակյան կուսակցությունը կազմակերպել էր ընդհանուր համագումար Ռումինիայում, Թալեաթին մահապատժի կազմակերպելու համար: Արևելյան Յասյանը դավաճանեց հայերին եւ Հնչակյան կուսակցության 21 անդամներ սպանվեցին: Արշակ Եղաճյանը գնդակահարեց դավաճան Յասյանին: 21 հոգուց միայն մեկը կենդանի մնաց որն էր Հմայակ Արամյանը, նա համագործակցեց թուրքերի հետ ու դարձավ դավաճան:

Չկայացած դատավճիռ

Դատավճիռի ցուցակում էին նաեւ Օսմանյան «Միություն եւ Առաջադիմություն կուսակցության» կոմիտեի գերագույն քարտուղար Նազիրը: Նրան հետապնդում էին, բայց մահապատժի չի բերվել:

Նազիրը վերագործավ թուրքի, որտեղ կարճ ժամանակ անց Քեմալ Աթաթուրքի դեմ մահապատժի համար մահապատժի է ենթարկվել:

«Նեմեսիս» ընդհատվեց, երբ ընդունվեց «Պրոմեթեի» ծրագիրը: 1922 թ. հայ, վրացի եւ ազերի վտարանդի կառավարությունները մտան համագործակցության մեջ՝ ընդգրկեմ բոլշևիզմի, եւ ՀՅԴ ղեկավարությունը որոշեց ընդհատել թուրք ոճրագործների ահաբեկումը:

Վերը հիշատակված բյուրյակները հասան անհիշելի, որ կասեցվեց Նեմեսիսի գործունեությունը: Թուրքն այլեւս ցեղասպան չէր, այլ կովկասյան ժողովուրդների միակ պաշտպան:

Այդհետագայում միայն, ցանկանալով կրկին ստվարացնել իր նոսրացած շարքերը, ՀՅԴ-ն իրեն վերագրեց Նաթանիել եւ նրա անձնակազմի մարտիկների (եւ ո՛չ միայն նրանց) գործած սխրանքները: ՀՅԴ-ի թուրքամետ ու ապագային քաղաքական դիրքորոշման պատճառով, Շահան Նաթանիել խոսում է իր կապերն այդ կուսակցության հետ եւ շարունակում իր գործն՝ այս անգամ հասարակական-գաղափարական ոլորտում: Հիմնել է «Արեւմտահայ ազատագրական ուխտ» կազմակերպությունը, խմբագրել «Ազատամարտ» շաբաթաթերթը, հեղինակ է մի շարք արժեքավոր երկերի, ուր շարադրելով իր հայացքները՝ հիմնավորել է թուրքի հետ հավետ թշնամի մնալու կենսաբանական անհրաժեշտությունը:

1958 թ., Հայաստանի խորհրդայնացումից հետո առաջին անգամ Նաթանիելը այցելեց Հայրենիք:

Մեծ Հայր վախճանվեց 1983 թ. - ին Բոստոնում սերունդներին կտակելով իր գաղափարների՝ գեների ուժով ապացուցված ճշմարտությունը:

Իթիքի հատի գլխավոր քարտուղար Նազիրը գաղտնի անցավ Թուրքիա, 1926 թ. Քեմալի դեմ կազմակերպված անհաջող մահափորձից հետո ձերբակալվեց եւ կախաղան հանվեց նույն թվականին, Չմյուռնիայում (Բզմիր):

«Նեմեսիս» մասնակիցները. Շահան Նաթանի (1884-1983), Արմեն Գարո (Գարեգին Պաստերմազյան, 1872—1923), Միսաք Թուրքյան (1894 -1968), Արշավիր Շիրակյան (1902 -1973), Արամ Երկանյան (1895 -1930), Արտաշես Գեորգյան, Պետրոս Տեր-Պողոսյան, Ստեփան Մաղիկյան:

Վերջաբան

Այսպիսով արեւմտահայ ժողովուրդը կորցրեց իր Ֆիզիկական գոյությունը, իր գույքն ու ունեցվածքը, իր ազգային արժանիքները, իր հայրենիքը, ոչնչացման ենթարկվեցին 66 քաղաքների ու 2500 գյուղերի հայ ազգաբնակչությունը, կողոպտվեցին ու քանդվեցին ավելի քան 2000 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ ու վարժարաններ: Օսմանյան Կայսրությունում միայն հայ ժողովրդին հասցված նհուլական վնասը 1919 թ. կուրսով կազմել է մոտ 15 միլիարդ Ֆրանկ:

Առաջին նամաշխարհային պատերազմի ավարտից հետո համաշխարհային հասարակության կողմից բողոքներ տեղի ունեցան, նրանց թվում էին՝ Ֆրանսիացի հնագետ-պատմաբան Ժակ դը Մորգանը, Գերմանացի հայագետ Յոզեֆ Մարկվարտը, Հոլանդացի Լեփսիուսը, Արմին Վեգները, Անտվան Մեյլեն, Ֆրեդր. Մակլերը, Արնոլդ Թոյնբին, Վալերի Բրյուստովը, Հենրի Մորգենտաուն եւ շատ ուրիշներ:

Հայուհին՝ «թուրքական ազգագրական երգերի մայր» տիտղոս էր նվաճել



Թուրքիայում հայ ինքնությունը թաքցրած հայտնի արվեստագետներից Էլիզա Օլջույանի կյանքի որոշ մանրամասները ներկայացնում ենք Akunq.net-ի թարգմանությամբ:

Էլիզա անունով հայ աղջիկը ծնվել է 1913 թ. մարտի 26-ին Էյսազղ (Խարբերդ) գավառի Արաբկիր քաղաքում, որն այսօր արևելյան Թուրքիայի Մալաթիա վարչական շրջանի մի մասն է: Նա նաև օպերետային պարուհի էր, ազգագրական երգեր ժողովող և ուսուցիչ: 1990-ական

թվականներին Ստամբուլի պետական կոնսերվատորիայի ազգագրական երգի բաժնի դոցենտին «թուրքական ազգագրական երգերի մայր» էին կոչում (թուրքերեն՝ «Թյուրքու անա»)։ Ըստ «Ստամբուլի կանանց թանգարանի» վեբ-կայքի՝ Էլիզայի հոր անունը Հարություն է եղել։

Դժբախտաբար, կարիերայի ամբողջ ընթացքում նա երբեք հրապարակավ չի խոստովանել իր հայկական ծագման մասին, իսկ թուրքերը կարծել են, թե թուրք է, քանի որ թուրքական անուն է ունեցել՝ Չեիրա Բիլիր։ 1985 թ. Արաբկիրի այն փողոցը, որտեղ նրա տունն է գտնվել, անվանակոչվել է «Չեիրա Բիլիր»։ Նա մահացել է 2007 թ. հունիսի 28-ին Ստամբուլում՝ ծերանոցում։

Այսօր այլևս գաղտնիք չէ, որ նա հայկական ծագում ունի։ Համացանցում տարբեր աղբյուրներ փաստում են, որ նրա իրական ազգանունը Սուրիանդակյան է եղել, մինչդեռ լրագրող Պերճուհի Բերբերյանը, ով Էլիզայի մանկության ընկերուհին է եղել, անցած տարի «Ակօս» թերթում լույս տեսած իր հոդվածում նշում է, թե Էլիզայի ազգանունն իրականում Օլջույան է. «Նա ամուսնությունից հետո է դարձել Չեիրա Բիլիր... Ինչ-որ մեկը նրա անունը համացանցում է գրանցել, ինչ-որ մեկն էլ տեսել, որ հայկական ծագում ունի, և ամենուրեք Էլիզա Սուրիանդակյան անուն-ազգանունն է տարածվել։ Ես չգիտեմ, թե ով է հորինել դա, երբ կամ ինչպես, սակայն ինչ-որ կերպ որոշվել է, որ նրա ազգանունը պետք է որ Սուրիանդակյան լինի... Սա միանգամայն սխալ է։ Չեիրա Բիլիրի իրական անունն Էլիզա Օլջույան է»։

Բերբերյանը պատմում է, որ ինքն էլեկտրոնային նամակ է ստացել Ալի Բերբեր Բիլիրի կողմից, ով ներկայացել է որպես Չեիրա Բիլիրի թոռ։ Այնուհետև Բերբերյանն անձամբ հանդիպել է Ալիի հետ, իսկ վերջինս էլ ասել է, թե ինքը գաղափար անգամ չունի, թե որտեղից է ի հայտ եկել «Սուրիանդակյան» ազգանունը։ «Ալին համառորեն դիմել է Էլիզային սխալ ազգանուն վերագրողներից մի քանիսին, սակայն նրանք պնդել են, թե «դա նրա իսկական ազգանունն է»։ Ալիից լավ իր տատիկի ազգանունը ո՛վ կարող է իմանալ։ Ալին ինձ ուղարկել է նաև Էլիզայի մոր՝ Աղավնի Օլջույանի շիրմաքարի լուսանկարը, որտեղ հանգչում է նաև Էլիզայի եղբայրը՝ Կարապետը... Տեսնենք, թե ինչով կպսակվեն Ալիի ջանքերը, ով վճռական է տրամադրված՝ կենդանի պահել իր տատիկի անունն ու ժառանգությունը», - գրում է Բերբերյանը։

Լրագրող Ալի Ջան Սեքմեշը գրում է, թե Էլիզայի հարազատները 1915 թ. Հայոց ցեղասպանության զոհ են դարձել. «Էլիզայի հայրը՝ Հարությունը, Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից է եղել, սակայն հայտնի չէ, թե որ ռազմաճակատում է կռվել, և նա պատերազմից հետ չի վերադարձել։ Արաբկիրը, ինչպես և ողջ տարածաշրջանը, քառսի մեջ էր 1915 թ. ողբերգության հետևանքով։ Էլիզայի հարազատներից շատերը, ով այդ ժամանակ դեռ գրկի երեխա էր, տեղահանության ենթակաների ցուցակներում էին ընդգրկված։ Էլիզայի մայրը հուսահատ վիճակում էր, նա մեկ տղա և երեք աղջիկ ուներ, որոնք դեռ շատ փոքր էին։ Նրան սարսափեցնում էր տեղահանության միտքը, որի ճակատագիրն անհայտ էր։ Նա չգիտեր՝ ինչ անել, երիտասարդ էր և այրի։ Ի վերջո ընդունում է արաբկիրցի մի թուրքի ամուսնության առաջարկն ու որոշում նոր կյանք սկսել այս կերպ խուսափելով Արաբկիրի հայերի մղձավանջից՝ տեղահանությունից։ Գուցե նրա

բարեկամներն ու ընկերները թուրքի հետ ամուսնությունը տարօրինակ համարեին, սակայն նա այդ գոհաբերությունն արել էր հանուն իր երեխաների»։

2002 թ. թուրքական «Մաբահ» պարբերականը հարցազրույց է վերցրել Բիլիրից։ Երբ նրան հարցրել են իր արմատների մասին, նա պատասխանել է. «Ես բնիկ էլյազղցի եմ։ Հորս չեմ հիշում, նա հայ է եղել, զինվորագրվել է և մասնակցել Առաջին աշխարհամարտին, երբ ես մեկ ու կես տարեկան եմ եղել։ Նրա մասին այլևս երբեք ոչինչ չենք լսել՝ կամ գնդակահարվել է, կամ մահացել։ Ես թուրք հորս գիտեմ։ Թեպետ գրանցման մատյաններով ես հայ եմ, սակայն թուրք եմ ու մուսուլման»։ Իսկ երբ «Մաբահ»-ի լրագրողը հարցրել է, թե ինչ է նրա իսկական անունը, պատասխանել է. «Դա կարևոր չէ, իմ իրական անունը չեմ ասի։ Ես փոխակերպված հայ եմ, բայց ինչպես ասացի, հարազատ հորս չգիտեմ»։ Նա նաև հավելել է, որ «Չեիրա» է անվանակոչվել մի մուսուլման մյուսֆթի կողմից՝ 22 տարեկանում, երբ պետք է թուրքի հետ ամուսնանար, իսկ «Բիլիր»-ը ամուսնու ազգանունն է։

«Ակօս» թերթի նախկին գլխավոր խմբագիր, լրագրող Ռոբեր Բուրթաշը 2007 թ. Էլիզայի կյանքի բոլորովին այլ մեկնաբանություն է ներկայացրել. «Նա երաժշտության դասեր է առել հայ երաժիշտ Արտակ Ջանդար-Թերզյանի մոտ... Նա իր իսկական անունը շճջացել է Ստամբուլի հայ արվեստագետների ու մտավորականների մոտ, բայց երբևէ չի բարձրաձայնել հանրության համար։ Նրա առաջին ձայնագրությունները Վահրամ Կեսարյանի ձայնագրման ստուդիայում են արվել։ Նրա դիմանկարը ստամբուլաբնակ մի հայ նկարիչ է նկարել։ Մի քանի անգամ Հակոբ Այվազի հրատարակած «Բոնուք» ամսագրի շապիկին է հայտնվել։ Բջերը գիտեին նրա իրական ծագումը, սակայն երբեք այն չեն հրապարակայնացրել... երբեք նրան բարդ դրության մեջ չեն դրել»։

Էլիզան միակ հայ արվեստագետը չէր, որ թուրք հասարակությունից թաքցրել է իր հայկական ծագումը։ Թուրքիայում բազմաթիվ հայ դերասաններ ու երաժիշտներ են նույնն արել՝ իրենց թուրք երկրպագուներին, կարիերան և անգամ կյանքը կորցնելու վախից դրոշմված։ Նրանցից մեկն էլ Սամի Հազինսեսն էր (1925-2002)՝ հայտնի դերասան, կոմպոզիտոր և երգահան, ում իրական անունը Սամուել Հակոբ Ուլուջյան է եղել, սակայն երբևէ այդ անունով հանդես չի եկել։

Իր եզակի հարցազրույցներից մեկում՝ 1994 թ. հայտնի իրավապաշտպան ու լրագրող Յեղա Օզջանը հարցրել է նրա իրական ծագման մասին, և գրույցն անախորժությամբ է սկսվել, քանի որ Ուլուջյանը չի ցանկացել խոսել իր հայկական արմատների մասին.

«-Դուք չե՞ք ցանկանում խոսել Ձեր հայկական ծագման մասին,- հարցրել է Օզջանը։

-Երբեք,- պատասխանել է Ուլուջյանը։

– Այսինքն՝ դուք չե՞ք ցանկանում, որ հայտնի դառնա Ձեր հայկական ինքնությունը։

– Ձեզ ո՛վ է ասել, որ ես հայ եմ»։

Երբ լրագրողը պնդել է, Ուլուջյանն ընդունել է, որ հայկական ծագում ունի և հավելել. «Այն սերը, որ նրանք [թուրքերը] ունեն իմ հանդեպ, կանհետանա։ Ահա թե ինչու չեմ ուզում դա [իմ էթնիկական ծագումը հայտնի դառնալ]։ Այս մասին դեռ մի գրեք, թողեք՝ մեռնեմ, հետո գրեք, իսկ առայժմ մոռացեք դրա մասին»։

Օգջանը հարցազրույցը հրապարակեց 2003 թ.՝ Ուլուջանի մահից մեկ տարի անց: Նրա հոգեհանգիստը տեղի ունեցավ Քաղրքյոյի Սուրբ Թագավոր եկեղեցում, իսկ մարմինը հողին հանձնվեց Ստամբուլի Հասանփաշայի հայկական գերեզմանոցում:

Անշուշտ, Թուրքիայում տիրող հայաֆորիան ու հայատյացությունն էին պատճառը, որ Էլիզան և Սամուելը գերծ են մնացել իրենց հայկական ինքնությունը հրապարակավ ընդունելուց: Թուրքիայում բազմաթիվ մարդկանց՝ այդ թվում նաև պետական ու զինվորական հեղինակությունների համար «հայ» բառն անգամ հայիոյանք է: Նույնիսկ Ցեղասպանությունից 102 տարի անց Թուրքիայի փոքրաքանակ հայ համայնքը՝ 60,000 մարդ, հաճախ ֆիզիկական ու բարոյական հարձակումների է ենթարկվում: Հայոց ցեղասպանությունն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զուտ իրենց հայրենի հողում հայերի զանգվածային կոտորած չէր. այն նպատակ ուներ ոչնչացնել նաև հայ մարդու ինքնությունն ու ոգին ոչ միայն պատերազմի տարիներին, այլև «խաղաղ ժամանակ»՝ տասնամյակների համար՝ սկսած Թուրքիայի Հանրապետության հիմնադրումից:

Հարգելի՛ հայրենակիցներ

Կոլկաթայում (Հնդկաստան, Արևմտյան Բենգալ նահանգ) այսօր էլ գործում է 1821թ. հիմնադրված Հայոց մարդասիրական ակադեմիան:

Մինչև Հնդկաստանի անկախության ձեռքբերումը վերոնշյալ հաստատությունը եղել է հարավասիական տարածաշրջանի հայկական համայնքների հիմնական միջնակարգ ուսուցման կրթօջախը, որտեղ ուսանել է շուրջ 280 աշակերտ: Դպրոցը ֆինանսավորվել է հնդկահայ բարերարների կողմից: Դպրոցի գործունեությունը իրականացվում է սովորի քան մեկ դար առաջ հնդկահայ համայնքի կողմից ստեղծված բարեգործական հիմնադրամի հաշվին:

Սակայն 20-րդ դարի կեսերից Հնդկաստանի հայ համայնքի շարունակական նվազման հետևանքով այժմ կորույկ պակասել է կրթօջախում ուսանող աշակերտների թիվը: Թեև առկա ֆինանսական միջոցները թույլ են տալիս ընդունել մինչև 250 աշակերտ, ներկայում դպրոցում ուսանում է շուրջ 70 աշակերտ, որոնց գերակշիռ մասը ՀՀ քաղաքացիներ են:

Տեղեկացնում ենք, որ այստեղ կարող են սովորել հայ երեխաներ ցանկացած երկրից: Առաջարկում ենք դիտարկել նաև մանկատներից, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքներից համապատասխան տարիքի երեխաների՝ տվյալ կրթօջախը ընդունման նպատակահարմարությանը, որտեղ նրանք հնարավորություն կստանան ձեռք բերելու առավել որակյալ կրթություն:

Կից ներկայացնում ենք դպրոցի ղեկավարության հետ մշակված տեղեկատվական հսկիթը կրթություն: Անհրաժեշտության դեպքում Հնդկաստանում ՀՀ դեսպանությունը և Սփյուռքի նախարարությունը պատրաստ են տրամադրելու լրացուցիչ տեղեկատվություն:

*Հարգանքով
Տեղեկատվության և հեռահաղորդակցության վարչության պետ
Վաղինակ Վարդանյան*

ԿՈՒԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ



Կոլկաթայի Հայոց մարդասիրական ակադեմիան⁶ հիմնադրվել է 1821թ. հնդկահայ համայնքի նախաձեռնությամբ և մինչև 1870թ. ունեցել է իր ինքնուրույն կրթական ծրագիրը, որը հետագայում համապատասխանեցվել է նահանգի կրթական համակարգի պահանջներին:

1999թ. Կոլկաթայի Գերագույն դատարանի որոշմամբ կրթօջախը հանձնվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ինսամակալությանը: Նույն որոշմամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին է վերապահվել ճեմարանի գործունեության կառավարման հետ կապված բոլոր լիազորությունների իրականացումը:

Կրթօջախն ունի բուժարան, մարզասենյակ, լողավազան, տղաների և աղջիկների համար նախատեսված առանձին կացարաններ: Այնտեղ գործում է 1828թ. հիմնադրված «Արարատյան» գրադարանը:

Ներկայում հաստատությունում ուսանում են աշակերտներ առավելապես Հայաստանից:

Ընդունելության պայմանները

Կրթօջախ կարող են ընդունվել 8-ից 11 տարեկան պատանիները: Ընդունելությունը կատարվում է հարցազրույցի հիման վրա, որը տեղի է ունենում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի անմիջական ղեկավարությամբ: Հնդկաստանի մուտքի արտոնագրի տրամադրման վճարը և ճանապարհաձախարհը հոգում է կրթօջախը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համապատասխան ծառայության միջոցով:

Դպրոցը երեք տարին մեկ հոգում է աշակերտների՝ ամառային արձակուրդներին Հայաստան մեկնելու և վերադառնալու ճանապարհաձախարհը, իսկ միջանկյալ ժամանակահատվածում նրանք կարող են այցելել Հայաստան սեփական միջոցներով:

Դպրոցի ղեկավարությունը, որպես օրինական ինսամակալ, պատասխանատու է ՀՀ քաղաքացի հանդիսացող արական սեռի շրջանավարտների՝ պարտադիր ժամկետային զինծառայությունն անցնելու նպատակով Հայաստան վերադարձի համար:

Կրթությունը

Կոլկաթայի Հայոց մարդասիրական ակադեմիան հայկական թեքումով անգլիալեզու միջնակարգ դպրոց է,

⁶ Պաշտոնական կայքը. <http://www.armeniancollege.edu.in/>

որտեղ աշակերտները սովորում են նաև հինդի: Հայաստանից գործուղված մասնագետների կողմից հայերենով դասավանդվում են Հայոց լեզու, Հայ գրականություն, Հայոց պատմություն, Հայ եկեղեցու պատմություն և Հայ երգ-երաժշտություն առարկաները: Մանկավարժների ընտրությունը և Կոլկաթա գործուղումը իրականացնում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից: 10-ամյա միջնակարգ կրթությունը բարեհաջող ավարտած և համապատասխան վարքագիծ դրսևորած սաներին հնարավորություն է տրվում կրթությունը շարունակել Կոլկաթայի լավագույն ավագ դպրոցներում:

Սաների կեցության, ուսման, հագուստի և գրենական պիտույքների ծախսերն ամբողջովին հոգում է կրթօջախը:

Բժշկական ապահովումը

Ճեմարանն ունի բժիշկ, ով շաբաթը երկու անգամ այցելում է աշակերտներին: Առողջական զանգատների դեպքում աշակերտի զննությունից հետո նշանակվում է համապատասխան բուժում, իսկ անհրաժեշտության դեպքում նա տեղափոխվում է հիվանդանոց: Առկա է նաև շուրջօրյա բուժքոչ հաստիք, որն այժմ ժամանակավորապես թափուր է (ընդունելության համար տրված է հայտարարություն): Բժշկական բոլոր ծախսերը հոգում է կրթօջախը:

Մենդակարգը

Ճեմարանն ունի ճաշարան, որտեղ աշակերտները սնվում են օրը երեք անգամ: Նրանք նաև թեթև ուտեստներ են ստանում երկար դասամիջոցին և կեսօրից հետո ազատ ժամանցին: Հաճախ աշակերտներին տրվում են անհրաժեշտ մթերքներ, որպեսզի նրանք պատրաստեն թխվածքներ կամ ազգային ուտեստներ:

Հիգիենայի պայմանները

Դպրոցն ունի վաքսատուն, որտեղ լվացվում և արդուկվում է աշակերտների հագուստը: Յուրաքանչյուր շաբաթ նրանք ստանում են մաքուր անկողին: Ննջասենյակների, սանհանգույցների, դասարանների մաքրությունն ապահովում են հավաքարարները: Տարածքի մաքրությունն ու այգու խնամքը կատարվում են բակային աշխատողների կողմից: Աշակերտները ստանում են համազգեստ, կոշիկ, սպորտային հագուստ, ներքնաշորեր և անձնական հիգիենայի բոլոր պարագաները:

Էքսկուրսիաները և ուխտագնացությունները

Դպրոցի տեսչությունը ուսուցչական կազմի հետ միասին հաճախակի կազմակերպում է բազմապիսի կրթադաստիարակչական և ճանաչողական էքսկուրսիաներ Կոլկաթայի զանազան թանգարաններ, տեսարժան վայրեր, իսկ ամառային արձակուրդներին՝ նաև այցեր գրոսայգիներ ու ժամանցի վայրեր:

Յուրաքանչյուր կիրակի աշակերտները մասնակցում են Կոլկաթայում կամ Հնդկաստանի Արևմտյան Բենգալ նահանգի այլ քաղաքներում գոյություն ունեցող հայկական եկեղեցիներից որևէ մեկում մատուցվող սուրբ պատարագին, որի ընթացքում տղաների մի մասն ըստ ցանկության

սպասավորում է սուրբ խորանում, իսկ աղջիկները որպես դպրաց դաս երգում են երգչախմբում:

Կապը հարազատների հետ

Շաբաթը մեկ օր աշակերտներին տրվում է հնարավորություն գրադարանից «Skype» ծրագրի միջոցով գրուցել հարազատների հետ (արձակուրդներին ավելի հաճախ): Աշակերտների ննջարանում առկա է քաղաքային հեռախոս, սահմանված ժամերին հարազատները կարող են զանգահարել:

Ուսումնական տարվա ընթացքում սաներին արգելվում է օգտագործել բջջային հեռախոս կամ պլանշետ: Առկայության դեպքում դրանք պահվում են ղեկավարության մոտ և արձակուրդներին վերադարձվում են:

Դպրոցի տարածքում տեղադրված տեսախցիկների միջոցով հնարավոր է առցանց հետևել բակում ու մարզադաշտում աշակերտների երեկոյան ժամանցին:

Հարազատների այցելությունները

Աշակերտների հարազատները, նախապես տեղեկացնելով, կարող են այցելել երեխաներին: Դպրոցի ղեկավարությունը նրանց տրամադրում է ժամանակավոր կացարան: Հաճախ աշակերտներին այցելած ծնողները կամավոր աշխատառում են խոհանոցում՝ օգնելով հնդիկ խոհարարներին պատրաստելու հայկական ուտեստներ

Դպրոցի տարածքը

